**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ**

Հեռակա ուսուցում 1721 թողարկում

Կառավարման ամբիոն

**Կյանքի որակի բարձրացման հիմնախնդիրները ՀՀ-ում**

# ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶ

«Կառավարում» մասնագիտությամբ հանրային կառավարման մագիստրոսի որակավորման աստիճան հայցելու համար

Կրթական ծրագիր՝ «**Հանրային կառավարում**»


**Մագիստրանտ՝** **Համբարձումյան Քրիստինե Մանվելի**

**Ղեկավար՝** **Խեչոյան Թերեզա Բաղիշի**

**Ամբիոնի վարիչ՝** **Խաչատրյան Վիլեն Վիկտորի**
տ. գ. թ., դոցենտ


**ԵՐԵՎԱՆ 2020**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**......3

**ԳԼՈՒԽ 1. ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ և ԴՐԱ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ**......7

*1.1. Կյանքի որակի հասկացությունը և էությունը*......7

*1.2. Կյանքի որակի գնահատման տեսական ցուցանիշները և չափորոշիչները*......12

*1.3. Կյանքի որակի գնահատման միջազգային փորձը և միջազգային ցուցանիշները*......18

**ԳԼՈՒԽ 2. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ և ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ՎՐԱ:**......27

*2.1. Բնակչության եկամուտների սպառման , բաշխման մոդելավորումը և կանխատեսումը:*.27

*2.2. Աղքատությունը 'որպես տնտեսական և սոցիալական կատեգորիա:*......32

**ԳԼՈՒԽ 3. ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**......45

*3.1. ՀՀ սոցիալական վերափոխումների արդյունավետության բարձրացման ուղիները*......45

*3.2. Բնակչության դրամական եկամուտների ավելացման և բաշխման պետական կարգավորումը*......55

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**......65

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**......68

**Հավելված**

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդկային զարգացման հայեցակարգում առանձնահատուկ և կարևոր տեղ ունի բնակչության կյանքի որակը, բնակչության եկամուտները և բարեկեցությունը: Վերջին հաշվով, որքան բարձր է բնակչության կյանքի որակը, այնքան, մեծ են մարդկային զարգացման իրական հնարավորությունները: Բնակչության կյանքի որակը հնարավոր չէ չափել քանակական կամ որակական ցուցանիշով: Կյանքի որակը (կենսամակարդակը բարեկեցությունը,) իր ամենաընդհանուր բնութագրմամբ ոչ այլ ինչ է, քան բնակչության պահանջմունքների բավարարման որոշակի մակարդակ, կամ աստիճան, քանի որ ոչ մի հասարակարգում և ոչ մի երկում հասարակության, մարդկանց բոլոր պահանջմունքները լրիվ բավարարվել չեն կարող: Այստեղից բխում է հիմնախնդրի լուծման սկզբունքային այն մոտեցումը, որ հասարակությունը չպետք է նպատակ դնի բնությունից ստացված սահմանափակ ռեսուրսները մինչև վերջ սպառելու, առավելագույնի հասցնել իր անձնական սպառումը և բարեկեցությունը՝ անտեսելով ապագա սերունդների գոյատևելու և նույնպես բարեկեցիկ ապրելու տրամաբանական և բարոյական անհրաժեշտությունը :

Պետք է նշենք, որ Հանրային քաղաքականության մշակման և բնակչությանը ծառայությունների մատուցման յուրաքանչյուր բնագավառ ներկայիս աշխարհում առաջնորդվում են կենսամակարդակի բարելավման նպատակով: Ավելին տնտեսական, սոցիալական, մշակութային և քաղաքական հարթություններում կյանքի որակը ծառայությունների մատուցման ցանկալի արդյունքն է՝ արտահայտված կրթության, առողջապահության, սոցիալական ծառայությունների, ինչպես նաև բոլոր մակարդակներում պետական գործընկերային քաղաքականության ուղղություններով: Կյանքի որակի սահմանումների բազմազանության մեջ որևէ մեկի ընտրությունն ու նպատակադրումը, այսպիսով, կախված է հասարակությանն ուղղորդված քաղաքականության շեշտադրումներից: Սա է հիմնական պատճառը, որ կյանքի որակի կամ հասարակությունների կամ դրանց առանձին խմբերի բարեկեցության չափման ու գնահատման միջազգային փորձերը ծայրահեղ տարբեր են որդեգրված մոտեցման,

կիրառվող մեթոդաբանության, խնդիրների ընդգրկվածության, ոլորտների և բնութագրիչների ընտրության, հետազոտության ծավալների և այլ չափանիշներով:

Այս քաղաքականության միջոցառումների իրականացումը, նախ և առաջ, կախված է երկրի տնտեսության վիճակից: Այսպես, քաղաքացիներին նվազագույն եկամուտներով ապահովելու համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսները կարող են ապահովել բնակչության աշխատունակ մասի զբաղվածությամբ, արդյունաբերական արտադրության զարգացվածությամբ և այլն: Սոցիալական քաղաքականության միջոցառումների այսպիսի ուղղակի կախվածությունը տնտեսական գործոնից բնորոշ է նախ և առաջ մեկ շնչին բաժին ընկնող ցածր եկամուտներով երկրներին, որտեղ տնտեսական ռեսուրսները ստիպված են վերաբաշխել նույնիսկ ի հաշիվ աշխատունակ բնակչության նախորդ սերունդների սոցիալական երաշխիքների: Հարաբերականորեն բարձր ազգային եկամուտ և գործող սոցիալական ծրագրեր ունեցող երկրներում սոցիալական կարիքների համար լրացուցիչ միջոցների հատկացման որոշումներն իրենց բնույթով համարվում են ավելի շուտ քաղաքական, քան տնտեսական: Քանի որ քաղաքացիների հիմնական պահանջմունքները բավարարված են, պաշտպանության հետագա մեծացման հարցը դառնում է քաղաքական քննարկումների առարկա:

Մագիստրոսական թեզի թեմայի արդիականությունը պայմանավորված է վերը թվարկված հիմնախնդիրներով, որոնք պահանջում են հիմնավորված ուսումնասիրություն և վերլուծություն:

***Հիմնական նպատակը և խնդիրները:*** Մագիստրոսական թեզի հիմնական ***նպատակն*** է ուսումնասիրելով ժամանակակից փորձը, կիրառվող մոդելներն ու զարգացման միտումները, հաշվի առնելով անցումային երկրներում բնակչության աղքատության հաղթահարման հիմնախնդրի լուծման հրատապությունը, բացահայտել ՀՀ-ում եկամուտների բաշխման անհավասարության նվազեցմանն ուղղված սոցիալա-կան քաղաքականության թիրախները, ուսումնասիրել այդ խնդրի լուծմանն ուղղված միջոցառումների ամբողջությունը և առաջարկել բնակչության կյանքի որակի և կենսա-մակարդակի բարձրացմանն ուղղված քաղաքականության հետագա զարգացման ուղղությունները, մշակել ու առաջադրել Հայաստանի սոցիալական ոլորտի բարելավմանն ուղղված, գիտականորեն հիմնավորված, արդյունավետ և կիրառելի միջոցառումներ:

Այս նպատակի իրականացման համար առաջադրվել են հետևյալ ***խնդիրները.***

- ուսումնասիրել շուկայական հարաբերությունների համակարգում սոցիալական ոլորտի դերի և կարգավորման արդի մեթոդների էությունը,
- համաշխարհային տնտեսության տարածաշրջանային առանձին միավորների (երկրների) եկամուտների քվանտիլային և դեցիլային բաշխվածության ուսումնասիրության հիման վրա բացահայտել եկամուտների անհավասարաչափ բաշխվածության հիմնական բացասական կողմերը, ինչպես նաև առաջարկել դրանց վերացման և եկամուտների անհավասարության կրճատման ուղիներ և մեխանիզմներ,
- հետազոտել ՀՀ բնակչության կենսամակարդակի և եկամուտների, ինչպես նաև աճող պահանջմունքների փոխկապակցվածությունը, առաջարկել հայեցակարգային մոտեցումներ՝ այդ փոխկապակցվածության արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ,
- գնահատել ՀՀ բնակչության՝ ըստ դեցիլային և քվանտիլային խմբերի եկամուտների ու ծախսերի անհավասար բաշխվածությունը՝ հիմնավորելով այդ անհավասարության հաղթահարմանն ուղղված հիմնական ուղիները,
- գնահատել ՀՀ տնտեսական բարեփոխումների ժամանակաշրջանի մակրոտնտեսական քաղաքականության ազդեցությունը բնակչության կյանքի որակի և կենսամակարդակի շերտավորման վրա,
- կատարել ՀՀ բնակչության կյանքի որակի և կենսամակարդակի բարելավմանն ուղղված քաղաքականության հիմնական ուղղությունների ամփոփ վերլուծություն և առաջարկել այդ ոլորտի կատարելագործման որոշակի միջոցառումներ,
- մշակել բնակչության աղքատության հաղթահարմանն ուղղված քաղաքականության հիմնական ուղղությունները:

**ՈՒսումնասիրության օբյեկտը և առարկան:** Կյանքի որակի ուսումնասիրությունները հիմնականում կատարում են երկու ուղղությամբ: Առաջին դեպքում ուսումնասիրության օբյեկտ է հանդիսանում անհատը, որն ունի իր սուբյեկտիվ ընկալումները միջավայրում առկա օբյեկտիվ գործոնների նկատմամբ: Սակայն հավաքական ցուցանիշներում մեկ անհատը չի կարող դիտարկվել մյուսներից առանձնացված: Հետևաբար երկրորդ ուղղությունում ուսումնասիրության օբյեկտ է դառնում հասարակությունը: Ըստ էության՝ <<փաստացի կենսամակարդակ-անհատ-

բավարարվածություն>> փոխանցման շղթայի վերջնական ելքի վրա էականորեն ներգործում են անհատի արժեքային համակարգը: Այս իմաստով կյանքի որակի ցանկացած բաղադրյալ գնահատական անհրաժեշտաբար պետք է հաշվի առնի անհատի արժեքային համակարգի շրջանակներում կազմավորված պատկերացումների, կարծիքի ու ընկալումների դերը բավարարվածության դրսևորման վրա:

Ուսումնասիրության առարկան բնակչության կյանքի որակի և նրա բաղադրիչների տեսական, հայեցակարգային և ծրագրային հիմնախնդիրներն են և դրանց լուծման ուղիների բարելավումը:

***Հետազոտության տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը:***

Հետազոտության տեսական և մեթոդական հիմքը կազմել են կյանքի որակի վերաբերյալ հայ հետազոտողների աշխատությունները և արտասահմանյան գրականություն, կյանքի որակի տեսության, գնահատման, կենսամակարդակի կանխատեսման ցուցանիշների թեմաներով հրատարակված գիտական աշխատությունները: Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են վիճակագրական և վերլուծական նյութեր:

Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տվյալների բազաները, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակված տվյալները, Հայաստանի Հանրապետության իրավական և նորմատիվային փաստաթղթերը, միջազգային և հայկական տարբեր կառույցների տեղեկագրերը և փորձագիտական գնահատումները, սոցիալական հարցումների և հետազոտությունների արդյունքները:

**Կառուցվածքն ու ծավալը:** Մագիստրոսական թեզը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, 3 գծապատկերից, 5 աղյուսակից, օգտագործված գրականության ցանկից և 1 հավելվածից:

# ԳԼՈՒԽ 1. ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ և ԴՐԱ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

## *1.1. Կյանքի որակի հասկացությունը և էությունը*

Կյանքի որակ հասկացությունը դիտարկվում է որպես քաղաքացիների ընդհանուր բարեկեցության սոցիալ-տնտեսական կատեգորիայում ընդգրկված տարրերի համակարգի պրիզմա: Կյանքի որակի մակարդակը տնտեսական զարգացման արդյունք է, սպառողական պահանջարկի աճի գործոն, որը խթանում է ձեռներեցության զարգացումը և, ի վերջո հանգեցնում է հասարակության, որպես ամբողջության, բարեկեցության մակարդակի բարձրացման: Բնակչության կյանքի որակը պետք է լինի պետության գործունեության նպատակային նշանակետը: «Կյանքի որակ» տերմինը առաջին անգամ օգտագործել է Ա. Պիգունը՝ 20-րդ դարի սկզբին, «բարեկեցության տնտեսական տեսություն» աշխատության մեջ: Կյանքի որակ հասկացությունը խիստ անորոշ ու բարդ է այն հստակ սահմանելու համար, հատկապես այն պարագայում, երբ առանձին գիտություններ և քաղաքականության կոնկրետ ուղղություններ գաղափարին յուրովի մեկնաբանություն են տալիս՝ հետազոտության նպատակներին համապատասխան: Ըստ Շելըոկի՝[1] կյանքի որակի սահմանումն ու մեկնաբանությունները տարբեր են և թվով անցնում են 100-ը: Վ. Ի. Գուրիևի «Սոցիալական վիճակագրության հիմունքներ» աշխատանքում տրվում է այսպիսի սահմանում. «Կյանքի մակարդակը բարդ հավաքական սոցիալ-տնտեսական կատեգորիա է, որն արտահայտում է մարդկանց նյութական և հոգևոր պահանջմունքների բավարարման աստիճանը: Այն ձևավորվում է շատ բաղկացուցիչներից. աշխատողների իրական եկամուտների չափ, նյութական բարիքների և ծառայությունների սպառման մակարդակ, բնակչության ապահովվածությունը բարեկեցիկ բնակարաններով, կրթվածության աճը, քաղաքացիների բժշկական և մշակութակենցաղային սպասարկման զարգացման աստիճանը, բնական միջավայրի վիճակը»:[2]

---

[1] Schalock, R. L. (ed) (1996) Quality of Life: Volume I: Conceptualization and Measurement. Washington: AAMR

[2] Гурьев, В. И. Основы социальной статистики. Методы. Системы показателей. Анализ – М. 1991г.

Կարելի է ասել, կյանքի որակը գիտական կատեգորիա է, որը շարունակական զարգացում է ապրում և համարվում է բազմաոլորտային հասկացություն: Կիրառվում է տարբեր համատեքստով և նպատակերով: Ըստ մի շարք տնտեսագետների և քաղաքական գործիչների՝ կյանքի որակը 21-րդ դարում ունի գերակա դիրք և անընդհատ ուսումնասիրության կարիք ունի: Քանի որ ժամանակի ընթացքում մարդկանց պահանջմունքները աստիճանական փոփոխության են ենթարկվում և անընդհատ ուսումնասիրման կարիք ունեն: Տնտեսագիտական գրականության մեջ «կյանքի որակ» հասկացությունը սահմանում չունի: Կյանքի որակը (անգլ. quality of live) հասկացություն է, որը բնութագրում է բնակչության կյանքի նյութական չափանիշները, անվտանգությունը, արժանապատվության ապահովման աստիճանը և մարդու անհատականության դրսևորման հնարավորությունը: Կյանքի որակը սահմանելիս հետազոտողները «կյանքի որակ» հայեցակարգի սահմանման ժամանակ ուշադրություն են դարձնում տնտեսական կողմին, կյանքի նյութական անվտանգությանը: Ինչպես նաև տալիս են հակառակ սահմանումը, որ «կյանքի որակը» ինտեգրված սոցիալական ցուցանիշ է: Այսինքն կյանքի որակը բնութագրվում է տարբեր կերպ՝ ելնելով մարդու պահանջմունքներից և բավարարվածության մակարդակից: Կյանքի որակն ըստ որոշ մտավորականների (Սեն, Ռոուլզի, Վալցեր) սահմանվում է, այսպես կոչված, մարդկային *«կարողություններով»,* յուրաքանչյուրի այն հատկանիշների ամբողջությամբ, որոնք թույլ են տալիս նրան որոշակի գործունեություն իրականացնել և առաջնորդել ամբողջ կյանքում: Չնայած այդ կարողությունները հնարավոր է, որ համընդհանուր արժևորված չլինեն մշակութային և այլ տարբերությունների պատճառով, ուստի անհրաժեշտ է խոսել դրանց վերաբերյալ նրանց տիպային նմանությունների համատեքստում: Կարելի է ասել, որ կյանքի որակը բխում է լինելիության (being) և կատարելության (doing) հնարավորությունների պայմաններից, որոնք անհատականորեն ու հասարակայնորեն են սահմանվում: Առանց լինելիության հետ կապված կարողությունների, ինչպիսիք են առողջությունը, սոցիալական կապերը, ինքնագնահատանքը, և կատարելու, ասենք՝ քաղաքական գործունեություն, մտավոր մարտահրավերներ և հետաքրքիր աշխատանք, անհատն ի վիճակի չէ օգուտներ քաղել: Օրինակ՝ ապրանքների գնման կարողությունը ենթադրություն է, սակայն դա ընդամենը բազմաչափ գնահատման մեկ գործոնն է:

Ինչպես Ադամ Սմիթն է[3] նշել, հասարակության մեջ սեփական արժանապատվության պահպանման նպատակով՝ սովորական հագուստի անհրաժեշտությունը, ապրանքների արժեքը բովանդակվում է հասարակական փոխգործակցությանը դրանց օժանդակության մեջ:

Ըստ կատարված բազմաթիվ ուսումնասիրությունների պարզ երևում է, որ գիտակցական կյանքի շրջանից սկսած մարդը ձգտում է բարելավել իր կյանքի որակը. ստանում է կրթություն, (այն աշխատանքի մեջ մարդու առաջնային կարիքներից է) ձգտում է կարիերիայի առաջխաղացման, ջանքեր է գործադրում հասարակության մեջ դիրքի և ճանաչման հասնելու համար: Պետք է հաշվի առնել , որ կյանքի որակը ավելին է քան նյութական բավարարվածությունը, այն ընդգրկում է մի շարք գործոններ, այլ կերպ ասած սոցիալական ոլորտը , որը մեծ ազդեցություն ունենի բնակչության կյանքի որակի պարամետրերի ձևավորման վրա: Այն ընդգրկում է այնպիսի համակարգեր(ոլորտներ), ինչպիսիք են առողջապահությունը, ֆիզիկական դաստիարակությունը և սպորտը, կրթությունը, սոցիալական ծառայությունները և սոցիալական ապահովությունը, բնակարանային և կոմունալ ծառայությունները, զբաղվածությունը, շրջակա միջավայրը, մշակույթը և այլն:

Հաճախ կյանքի որակը նկարագրելու համար օգտագործում են այլ տերմիններ՝ «բարեկեցություն» «կենսամակարդակ» , «կյանքի ոճ» և այլ հասկացություններ:

**Բարեկեցությունը** անընդհատ վերընթաց ապրող մարդու կյանքի համար անհրաժեշտ նյութական և հոգևոր բարիքներով մարդու բավարարվածությունն է:

**Կենսամակարդակը** մարդու ֆիզիկական, հոգևոր և սոցիալական պահանջների բավարարման հավաքական բնութագիրն է: Այն բնութագրում է մեկ շնչի հաշվով իրական եկամուտները, մեկ շնչի հաշվով սպառվող ապրանքների և ծառայությունների ծավալները:[4] Տնտեսական բարեկեցությունը չափվում է փողի օգնությամբ՝ տնտեսական չափիչներով , իսկ ընդհանուր կամ սոցիալական բարեկեցությունը չափվում է այնպիսի չափիչներով, ինչպիսին է մակարդակը, որակը, այլ ոչ թե բավարարվածության փաստը:

[3] Smith, Adam, [1776] 1976, vol. 2, bk. 5, ch. 2
[4] 4 Пигу А., Экономическая теория благосостояния, М., 1985, с. 512

Այս երկու հասկացությունների ընդհանրություններն այն է, որ նրանք բնութագրում են մարդկանց, բնակչության, բարեկեցության և կյանքի որակի բարձրացման առանձնահատկությունները: Այսինքն կյանքի որակը բնակչության կենսամակարդակի և կենսապայմանների ամբողջություն է, որը ընդգրկում է մարդկանց առողջությունը , կրթությունը, սոցիալական վիճակը, հոգեկան հավասարակշռությունը, հոգևոր պահանջմունքների բավարարվածությունը, հարմարավետության զգացումը:

Կյանքի որակը գաղափարապես բաժանվում է ոլորտների.

***Փիլիսոփայության ոլորտ***. փիլիսոփայության մեջ կյանքի որակը ընկալվում է որպես սոցիալական համակարգում մարդու բնութագրման բարդ հատկանիշ, որն արտահայտում է ազատության աստիճանը, զարգացման հնարավորությունները, հոգևոր և մշակութային արժեքների ընկալունակությունը:

***Տնտեսական ոլորտ.*** այստեղ շեշտը դրվում է անձի հիմնական կարիքների բավարարման աստիճանի, նրա զարգացման մակարդակի և կյանքի անվտանգության ապահովման աստիճանի վրա:

***Սոցիոլոգիական ոլորտ.*** այս ոլորտում առանձնացվում է նյութական և ոչ նյութական (մշակույթային) կարիքների բավարարման որակը, կրթության որակը, մատուցվող ծառայությունների որակը: Այսինքն այն բոլոր անհրաժեշտ գործառույթները, որոնք նպաստում են մարդու սոցիոլոգիական զարգացմանը:

***Առողջապահության ոլորտ.*** այս ոլորտում առանձնահատուկ կենտրոնում է առողջության և առողջության որակի, անհատի առողջական խնդիրների և կարիքների բավարարման անձի կյանքի իմաստի և երջանկության որոնման վրա:

***Կրթության ոլորտ.*** կրթությունը ոչ միայն մարդու զարգացման, այլև ազգային գոյատևման և մարդկային առաջընթացի գրավականն է: Այսօր կրթությունը դիտարկվում է որպես մարդկային կապիտալի արդյունավետություն, որի կարևոր բաղադրիչը ինտելեկտուալ կապիտալն է: Եթե հաշվի առնենք մարդկային կապիտալի դերի աճը տնտեսական և գիտատեխնիկան միտումներում, ապա դժվար չի տեսնել, որ կրթությունը դառնում է ժամանակակից հասարակության կյանքի որակի և զարգացման շարժիչ ուժը:

***Էկոլոգիական ոլորտ***. էկոլոգիապես անվտանգ միջավայրի առկայությունն է, կենդանի միջավայրի համապատասխանությունը օբյեկտիվ նորմերին և սուբյեկտիվ կարիքներին: Ըստ այս ոլորտների մշակվել է բնակչության կյանքի որակի գնահատման բազմաթիվ մեթոդներ և եղանակներ: Բազմիցս փորձ է արվում ներկայացնել բնակչության կյանքի որակի, որպես բնակչության կյանքից բավարարվածության աստիճանի տնտեսական գնահատման մեխանիզմ՝ վեր հանելով այն հիմնական չափորոշիչները, որոնք էական ազդեցություն ունեն կյանքի որակի վրա: Այսպիսով, առաջարկվող կյանքի որակի տնտեսական գնահատման ցուցանիշն իրենից ներկայացնում է բնակչության 1 շնչի հաշվով դրամական եկամուտների հարաբերությունը նվազագույն սպառողական զամբյուղի արժեքի ու մարդկային կապիտալի վերարտադրության համար անհրաժեշտ դրամական միջոցների հանրագումարի բազմապատկած սոցիալ-մարդկային կապիտալի ձևավորման գործակցի արտադրյալով :[5]

Վերոնշյալից կարելի է ենթադրել, որ բարեկեցիկ կյանք ապահովելու համար պահանջվում է «բարիքների բավականին մեծ պաշար»: Ըստ այդմ կյանքի մակարդակը գնահատվում է ոչ միայն բարիքների սպառման, այլ նաև դրանց ձեռք բերման հնարավորությունների միջոցով: Կյանքի որակի և հասարակության բարեկեցության գնահատման կամ չափման համար լավագույն հիմնավորված չափանիշ են համարվում՝ երկրի համախառն ներքին արդյունքը և համախառն ազգային արդյունքը (այսուհետ՝ՀՆԱ, ՀԱԱ): Էական կապ կա ՀՆԱ-ի, ՀԱԱ և կյանքի որակի միջև, քանի որ ՀՆԱ –ն և ՀԱԱ-ն ունիվերսալ չափորոշիչներ են, որոնց միջոցով չափվում է բնակչության բարեկեցության մակարդակը և կյանքի որակը: Այսինքն որպեսզի հասկանանք երկրի բնակչության բարգավաճման մակարդակը, պետք է հաշվել տվյալ երկրի ՀՆԱ-ն և ՀԱԱ-ն: ՀՆԱ-ն հաշվելու ժամանակ պետք է հաշվի առնել հարկերի չափը և գների աճը: Այն իրականացվում է յուրաքանչյուր տարվա գների ինդեքսի միջոցով: Այս երկու ազգային ֆինանսական միջոցները համարվում են հաջողակ հասարակության չափորոշիչներ:

[5] Ղանթարչյան Լ., Սոցիալապես անապահով խավերի կենսամակարդակի բարձրացման պետական կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում, Եր., 2017, էջ 8

Սակայն պետք է հաշվի առնել, որ կյանքի որակը ուղղորդվում է ոչ միայն նյութական պահանջմունքների բավարարման աստիճանի գնահատականի վրա հիմնվելով, այսինքն՝ ուղղակի քանակական չափմամբ, անհրաժեշտ է կիրառել տարբեր դասակարգման մեթոդներ, որոնք կդառնան կյանքի որակը բարձրացնելու ուղիներ: Դասակարգման մեթոդների՝ այսինքն սոցիալ-տնտեսական մեթոդների կիրառումը, հնարավորություն են ստեղծում բացահայտել մարդու բավարարվածության մակարդակը, աշխատանքում և կենցաղում հարմարավետության մակարդակը, հագուստի, սննդի բնակարանի, շրջակա միջավայրի որակը, գիտելիքի ձեռք բերման, ինքնագնահատականի բարձրացման և նմանատիպ այլ պահանջմունքների բավարարման կյանքի որակի գնահատման ցուցանիշներ կազմելուն: Այս սոցիալ-տնտեսական մեթոդները ուղղված են բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, այսինքն կյանքի որակի բարելավմանը, որը վերափոխման ցուցանիշ է:

## *1.2. Կյանքի որակի գնահապման փեսական ցուցանիշները և չափորոշիչները*

Իրականում կյանքի որակի գնահատման խնդիրն առաջին հերթին առնչվում է հենց բնակչության կյանքի որակին: Կյանքի որակի գնահատման կոնկրետ մեթոդի ընտրության ժամանակ ընդհանրապես անհրաժեշտ է լինում նախ և առաջ հստակեցնել, որ բնակչության և անհատի կյանքի որակի չափման պարագաներում տարբեր մոտեցումներ են կիրառվում: Սովորաբար բնակչության կյանքի որակի հետազոտությունները հիմնվում են սոցիալական ցուցանիշների հիման վրա, անկախ նրանից, թե սոցիալական, որ մակարդակի համար է իրականացվում կյանքի որակի գնահատում: Քանի որ կյանքի որակի գնահատումը իր մեջ կրում է կանխորոշող նպատակային արդյունքներ, այսինքն պետք է կիրառել չափորոշման և գնահատման հատուկ մեթոդներ, որոնց միջոցով կհավաքագրվեն տեղեկատվություններ՝ կյանքի քանակական և որակական որակի գնահատման համար: Անհրաժեշտություն է առաջանում մշակել համապատասխան մեթոդաբանություն կյանքի որակի բարձրացման ցուցանիշ ձևավորելու նպատակով: Կյանքի որակը գնահատելիս և մեթոդաբանություն կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել, թե որքան օբյեկտիվ են

կյանքի որակի որոշիչ ցուցանիշները: Այսինքն՝ բնակչության կյանքի որակի ուսումնասիրությունը պետք է կատարվի չափանիշային գնահատումների հիմնավորումներով, պլանավորվող և կազմակերպվող դիտարկումներով, տվյալների հավաքագրմամբ և վերլուծությամբ և իր մեջ պարունակի գիտական ուսումնասիրության տարր: Հետևաբար, կյանքի որակը չափվում է ոչ միայն նյութական, այլ նաև ոչ նյութական բարեկեցությամբ, որոնք ավելի լայն շերտ են կազմում սոցիալ-տնտեսական բարեկեցության համատեքստում: ԵՎ սոցիալ-տնտեսական այլընտրանքային ոչ դրամական ցուցանիշները, տարբեր գործոններ համատեղելով, ազդում են կյանքի որակի վրա:

Տարբեր հեղինակներ տարբեր մոտեցումներ ունեն կյանքի որակի ցուցանիշները և չափորոշիչները բնութագրելիս: Ըստ որոշ մտածողների , կյանքի որակը բնորոշվում է 4 ինտեգրալ ցուցանիշների միջոցով՝

- ստրեսային իրադրությունների և ընդհանրապես կյանքի դժվարությունների մակարդակով,
- շրջակա միջավայրի աղտոտվածության աստիճանով,
- բնակչության կուտակման աստիճանով,
- սննդի ու առողջության որակով:

ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի փորձագետները առաջնային ինտեգրալ ցուցանիշ են համարում ՝

- սննդամթերքների օգտագործումը,
- բնակչության առողջական վիճակը,
- կրթական մակարդակը:

Սակայն միայն թվարկած մի քանի ինտեգրալների միջոցով կյանքի որակը բնութագրելը ճիշտ չի համարվում, քանի որ անտեսվում են մարդկանց կյանքի բոլոր կողմերը, կյանքի որակի մակարդակները:

Առանձնացվում է կյանքի 4 մակարդակ.

- Բարեկեցության մակարդակ (բարիքների օգտագործում , որը ապահովում է մարդու բազմակողմանի զարգացմանը),

- Կյանքի նորմալ մակարդակ (բարիքների ռացիոնալ սպառում , որն ապահովում է մարդու ֆիզիկական և ինտելեկտուալ ուժերի վերականգնում),
- Աղքատության մակարդակ (առկա ռեսուրսների սպառում աշխատունակությունը պահպանելու մակարդակով՝ որպես աշխատուժի վերարտադրության նվազագույն սահման ),
- Չքավորության մակարդակ (ըստ կենսաբանական չափանիշների նվազագույն քանակությամբ ապրանքների սպառում, որը ընդամենը ապահովում է մարդու կենսունակությունը):

Վերոնշյալներից կարելի է ասել ,որ *կյանքի որակի դրսևորման հիմնական չափորոշիչը մարդու կեցությունն է, որով պայմանավորված է նրա զբաղեցրած տեղը հասարակության մեջ, նյութական և հոգևոր բարիքներով բավարարվածության հնարավորությունը, սեփական ունակությունները, իրականացնելու և անհրաժեշտ փոխհապուցում ստանալու կարողությունը և այն* մեկնաբանվում է տարբեր ցուցանիշներով: Գոյություն ունի ցուցանիշների տարբեր դասակարգումներ՝ մասնակի և ընդհանուր, տնտեսական և սոցիալ-ժողովրդագրական, օբյեկտիվ և սուբյեկտիվ, բնաիրային և արժեքային, անձնական եկամուտների, որակական և քանակական սպառման կառուցվածքի և հարաբերակցությունների վիճակագրական և այլն:

Կյանքի որակի գնահատման համար կարևոր ցուցանիշներ են համարվում սուբյեկտիվ և օբյեկտիվ բարեկեցությունը, անձնական եկամուտները: Հատկանշական է օբեկտիվ ցուցանիշների ուսումնասիրությունը, քանի որ օբյեկտիվ ցուցանիշների ուսումնասիրությունների ժամանակ հիմնականում կենտրոնանում են՝ առողջություն, աղքատություն, գործազրկության մակարդակ, կրթության մակարդակ, անհատական անվտանգություն, անհատական երջանկություն, սոցիալական բարեկեցություն, սոցիալական ապահովվածություն հասկացությունների վրա, որոնք հակադրվում են սուբյեկտիվ ցուցանիշներին:

Յուրաքանչյուր ցուցանիշ խորությամբ ուսումնասիրելով՝ հասկանում ենք, թե ինչպես կարող են այդ ընդհանուր երևույթները , որոնցից կազմված են այս հասկացությունները, ազդել երկրի բնակչության կյանքի որակի մակարդակի վրա:[6]

Սուբյեկտիվ սոցիալական բարեկեցության ցուցանիշներն են.

- Դրամական բարեկեցություն,
- Առողջություն,
- Անկախություն և ազատություն,
- Զբաղվածություն,
- Աշխատանք,
- Անհատական զարգացում,
- Որակյալ կրթություն,
- Անհատական անվտանգություն,
- Անհատական երջանկություն,
- Սոցիալակն բարեկեցություն,
- Սոցիալական ապահովվածություն,
- Բնակարանային պայմանները,
- Ընտանեկան հարաբերությունները ,
- Արդարության ընկալումը,
- Շրջակա միջավայրը,
- Հանգիստի ընտրություն,
- Ժամանակը :

Օբեկտիվ սոցիալական բարեկեցության ցուցանիշներն են.

- Բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն,
- Աղքատության մակարդակը ,
- Կրթության մակարդակը,
- Առողջության մակարդակը,

6 (Rapley, 2003, p.11):

- Կյանքի տևողությունը ,
- Հանցագործությունների աստիճանը,
- Մահացությունների տեմպը ,
- Աշխատաժամանակը և այլն:

Բացի այս ցուցանիշներից գոյություն ունի կյանքի որակի իմացության ևս 2 այլ ցուցանիշ՝ ինտեգրալ և մասնակի:

Ինտեգրալ մոտեցումն ունի 2 տիպի գնահատում՝ օբյեկտիվ և սույբեկտիվ: Օբյեկտիվ ինտեգրալ գնահատում իրականացվում է պաշտոնական վիճակագրական տեղեկատվության հիման վրա, չի ներառում հասարակական տարբեր հարցումներից ստացվող տվյալներ: Իսկ ահա սյուբեկտիվ ինտեգրալ գնահատումն իրականացվում է զուտ հարցումներից ստացվող տվյալների և կազմվում է հասարակության կարծիքի հիման վրա :

Տ. Ֆորեստը գտնում է, որ կյանքի որակը կարելի գնահատել 4 ինտեգրալ ցուցանիշների միգոցով.

- ստրեսային իրադրությունների և կյանքի դժվարությունների մակարդակի,
- շրջակա միջավայրի աղտոտվածության աստիճանի,
- բնակչության կուտակման ստիճանի ,
- սննդի ու առողջության մակարդակի ,

Սակայն ճիշտ և արդարացի չի համարվում այդ մի քանի ինտեգրալ ցուցանիշներով գնահատել կյանքի որակը, քանի որ անտեսվում է մարդկանց պահանջմունքների ու կյանքի մյուս կողմերը, և հնարավորույթյուն չի տալիս ավելի մանրամասն ներկայացնել մարդու պահանջմունքների համակարգը ամբողջությամբ: Բայց պետք է հաշվի առնել, որ կան համակարգեր, որոնք արտահայտվում են ոչ միայն սակավաթիվ ցուցանիշներ, այլ նաև չունեն ինտեգրալ բնույթ ունեցող ցուցանիշներ: Ըստ այդմ կյանքի որակի ցուցանիշների մշակման ժամանակ գլխավորը մարդու (հասարակության) պահանջմունքներն առավելագույնս աբողջական և մանրամասն արտահայտող համակարգի մշակման և կիրառման խնդիրն է: Այդ պատճառով առանձին քննարկման է արժանի պահանջմունքների համակարգի ընդունման հարցը: Պահանջմունքները օրգանիզմի, մարդկային անձնավորրության սոցիալական խմբերի,

ընդհանրապես հասարակության զարգացման և կենսագործունեության պահպանման համար անհրաժեշտ ինչ-որ բանի պահանջը (պահանջարկը) կամ անբավարարվածությունն է:[7]

Հայաստանի Հանրապետության բնակչության կյանքի որակի ուսումնասիրությունն իրականացնում է Ազգային վիճակագրական կոմիտեն: Համաշխարհային բանկի օժանդակությամբ այն ներառում է բնակչության բարեկեցությունը բնութագրող ցուցանիշների խմբերը: Բնակչության կենսամակարդակի ուսումնասիրության գործում էական նշանակություն ունեն սոցիալական նորմատիվները, որոնք համարվում են հասարակությունում սոցիալական գործընթացների գիտականորեն հիմնավորված ուղենիշեր: Որպես կանոն, առանձնացնում են հետևյալ սոցիալական նորմատիվները.

սոցիալական ոլորտի նյութական բազայի զարգացումը, բնակչության եկամուտներն ու ծախսերը, սոցիալական ապահովությունն ու սպասարկումը, բնակչության կողմից նյութական բարիքների և վճարովի ծառայությունների սպառումը, կյանքի պայմանները, շրջակա միջավայրի վիճակն ու պահպանությունը, սպառողական բյուջեն և այլն: Նշենք, որ հասարակության կյանքի որակը ու կենսամակարդակը բնութագրելու համար օգտագործվում է ինտեգրացված և մասնավոր, բնական և արժեքային ցուցանիշների ընդգրկուն համակարգ: Կենսամակարդակը բնութագրող ինտեգրացված ցուցանիշներից են բնակչության մեկ շնչի հաշվով իրական եկամուտները, իրական աշխատավարձը, եկամուտները երկրորդային զբաղվածությունից և ինքնազբաղվածությունից, շահաբաժինները, ավանդներից տոկոսները, կենսաթոշակները, նպաստները և կրթաթոշակները: Եկամուտների և աշխատավարձի քաղաքականության մեջ կարևոր տեղ են զբաղեցնում դրանց տարանջատումը (դասակարգումը բնութագրող ցուցանիշները, որոնք հնարավորություն են տալիս գնահատել տեղի ունեցող սոցիալական փոփոխությունները, սոցիալական

---

[7] Философский энциклопедический словарь. М., 1989

լարվածության մակարդակը հասարակությունում և բնութագրել կառավարության կողմից վարվող քաղաքականությունը:

Նյութական բարիքների և ծառայությունների սպառման բնակչության անհավասարությունը նշանակալի չափով պայմանավորված է ստացվող եկամուտների բաշխման անհավասարությունից: Բնակչության՝ ըստ կենսամակարդակի շերտավորման գնահատման համար օգտագործվում են հետևյալ ցուցանիշները.

- բնակչության բաշխումն ըստ մեկ շնչին ընկնող դրամական եկամուտների, բնակչության եկամուտների շերտավորման գործակիցները,
- դրամական եկամուտների ընդհանուր ծավալի բաշխումն ըստ բնակչության տարբեր խմբերի,
- եկամուտների կենտրոնացման (կոնցենտրացման) գործակիցը (Ջինիի ինդեքս):

Բնակչության՝ ըստ եկամուտների մակարդակի շերտավորման առանձնահատկություններն ուսումնասիրելու համար օգտագործվում են բաշխման շարքերի կառուցվածքային բնութագրիչներ (մոդա, մեդիանա, քվանտ, դեցիլ և այլն)

Ուսումնասիրությունից ելնելով կարելի է փաստել, որ կյանքի որակի գնահատումն իրականցվում է բարեկեցության բնութագրիչների սինթեզման արդյունքում:

## *1.3. Կյանքի որակի գնահապման միջազգային փորձը և միջազգային ցուցանիշները*

Ինչպես արդեն նշել ենք, բնակչության կյանքի որակը գիտությունների ամբողջական համալիր է, որի նպատակն է ուսումնասիրել բնակչության նյութական, հոգևոր և սոցիալական կարիքների բավարարվածության աստիճանը: Բայց բնակչության կյանքի որակի մակարդակը ավելի ամբողջական պատկերացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել միջազգային փորձը և եվրոպական երկրների ուսումնասիրությունները:

Եվրոպական երկրներում յուրաքանչյուր տարի կատարվում են կյանքի որակի հետազոտություններ, որը հայտնի է ԵԿՈՀ հապավմամբ (եվրոպական կյանքի որակի հետազոտություն): ԵԿՈՀ-ը մշակվել է որպես գործիք՝ Եվրոպայում սոցիալական

քաղաքականության վերաբերյալ քննարկումների և որոշումների ընդունման համար, քանի որ Եվրամիության անդամ երկրներում եվրոպացիների կայուն ապրելակերպի հիմնական սոցիալական մարտահրավերները մատնանշելու և տարբեր սոցիալ-տնտեսական խմբերի իրավիճակն ավելի լավ հասկանալու պահանջ կա: Եվ այս ԵԿՈՀ-ը ներառում է քաղաքական բավականին ընդգրկուն հետաքրքրություններ, որում հատուկ կարևորություն ունի տարիքի, սեռի, եկամուտների մակարդակի, առողջության, զբաղվածության և տարածաշրջանի հետ կապված տարբերություններն ուրվագծելու և հասկանալու անհրաժեշտությունը: ԵԿՈՀ մոտեցումը հիմնվում է «Եվրոպայում կյանքի որակի մշտադիտարկում» /Ֆահեյ, Նոլան և Ուելեն, 2003/ աշխատության մեջ ներկայացված հայեցակարգային շրջանակի վրա: Վերջինս սահմանում է մշտադիտարկման գործիքի նպատակներն ու բնութագրիչները, որոնք համահունչ են «Կյանքի և աշխատանքային պայմանների բարելավման եվրոպական հիմնադրամ»-ի (ԿԱՊԲԵՀ, Eurofound) առաքելությանը՝ քաղաքականություն մշակողներին ԵՄ մակարդակում կանոնավոր և նպատակային տեղեկատվություն տրամադրելուն: Կյանքի որակի մակարդակը չափվում է բնակչության կենսամակարդակը ապահովվող ռեսուրսների և կենսապայմանների, օբյեկտիվ և նկարագրական ցուցանիշների միջոցով, սակայն անհրաժեշտ է ներառել նաև սուբյեկտիվ տեղեկատվությունը: Սուբյեկտիվ տեղեկատվությունը վերլուծության կարևորագույն մասն է կազմում, քանի որ ուշադրություն է դարձվում մի կողմից՝ ներկայացված տեսակետների և վերաբերմունքների վրա, մյուս կողմից՝ առկա ռեսուրսների և կենսապայմաների վրա:

Կյանքի կենսամակարդակը հաշվարկվում է **սոցիալ-տնտեսական ցուցիչների և չափանիշների** պարամետրերի հիման վրա: Դրանց թվում հիմնականներն են.

- ժողովրդագրություն - պտղաբերություն, մահացություն, կյանքի տևողություն,
- ընտանեկան կյանք - ամուսնալուծությունների քանակը,
- հասարակական և կրոնական կյանք,
- բարօրություն – մեկ շնչի հաշվով ՀՆԱ, գնողունակություն,
- երկրում զբաղվածության մակարդակը, գործազրկությունը և աշխատանքային պայմանները,
- քաղաքական կայունությունը երկրում,

- քաղաքական ազատության մակարդակը,
- անվտանգություն և հանցագործություն,
- կլիման և աշխարհագրական դիրքը,
- բնապահպանական վիճակը,
- կանանց և տղամարդկանց հավասար իրավունքներ տարբեր ոլորտներում:

Այսինքն՝ յուրաքանչյուր երկիր ունի հետազոտության իր օբյեկտիվ և սուբյեկտիվ ցուցանիշները, որոնք հիմնվում է երկրի զարգացվածության մակարդակի վրա:

Կյանքի որակի ուսումնասիրությունն իրականացվում է միջազգային կազմակերպությունների կողմից կիրառվող սոցիալական ծրագրերի միջոցով, որոնք մշակում են կյանքի որակի գնահատման ցուցանիշներ: Կարելի է առանձնացնել ՀԲ Համաշխարհային զարգացման ցուցանիշները (The World Development Indicators), ՄԱԿ-ի «Մարդկային զարգացման ինդեքս», (Qquality-of-life index), ՄԱԿ-ի սոցիալական վիճակագրության ու ցուցանիշների ժողովածուն, Երջանկության Համաշխարհային Զեկույցը (World Happiness Report) սոցիալական վիճակագրությունը: Կյանքի կենսամակարդակի միջազգային չափման (համեմատության) համար ՄԱԿ-ը՝ օգտագործում է համախառն ազգային արդյունքի (ՀԱԱ) ցուցանիշը 1 շնչի հաշվով: Աշխարհի երկրների ցուցանիշը համեմատելիս, մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն սովորաբար դիտարկվում է ԱՄՆ դոլարով, սակայն սեփական բնակչության մեկ ՀՆԱ-ն հաշվարկելիս նրանք վերահաշվարկում են ցուցանիշը ազգային արժույթով ՝ դոլարի շուկայական փոխարժեքով: ՀՆԱ-ն հաշվարկվում է երկու եղանակով

- ՀՆԱ-ն (անվանական) մեկ շնչի հաշվով
- ՀՆԱ (PPP - գնողունակության հավասարություն) մեկ շնչի հաշվով:

PPP- ի երկրորդ տեսակը համարվում է ավելի ճշգրիտ, քանի որ այն նվազեցնում է տարբեր երկրների փոխարժեքների միջև տարբերությունը և ավելի օբյեկտիվորեն գնահատում է բարեկեցությունը: Աշխարհի երկրների բարեկեցության գնահատման և համեմատության ժամանակ հաճախ հաշվի է առնվում գնողունակության հավասարության ցուցանիշը ՀՆԱ-ի մեկ շնչի հաշվով:

Ըստ այդ դասակարգումով առանձնացնում ենք հետևյալ խմբի երկրներ.

1. Բարձր ՀԱԱ-ով-20-30 հազ. դոլար - 900 մլն մարդուն,

2. Միջին ՀԱԱ-ով -1-5 հազ. դոլար - 2700 մլն մարդուն,
3. Ցածր ՀԱԱ-ով 350-450 դոլար - 2400 մլն մարդուն:

**Ստորև ներկայացված են 2019 թ.տվյալներով բնակչության մեկ շնչին ընկնող ամենաբարձր ՀՆԱ-ի ցուցանիշ ունեցող առաջատար 10 երկրները**[8]

1. Լյուքսեմբուրգ - 113,196 դոլար
2. Շվեյցարիա - 83,717 դոլար
3. Մակաո - 81,152 դոլար
4. Նորվեգիա - 77,995 դոլար
5. Իռլանդիա - 77,771 դոլար
6. Քաթար ՝ 69,688 դոլար
7. Իսլանդիա - 67,037 դոլար
8. ԱՄՆ - 65,112 դոլար
9. Սինգապուր - 63,987 դոլար
10. Դանիա ՝ 59,795 դոլար

**Բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի 10 ամենաբարձր ցուցանիշ ունեցող երկրները (PPP) 2019 թ.**[9]

1. Քաթար ՝ 132,886 դոլար
2. Մակաո - 114,363 դոլար
3. Լյուքսեմբուրգ - 108,951 դոլար
4. Սինգապուր ՝ 103,181 դոլար
5. Իռլանդիա - 83,399 դոլար
6. Բրունեյ -80 384 դոլար
7. Նորվեգիա - 76,684 դոլար
8. ԱՄԷ - 69,435 դոլար
9. Քուվեյթ - 66,387 դոլար
10. Շվեյցարիա ՝ 66196 դոլար

---

[8] ttps://www.investopedia.com/articles/investing/051415/how-calculate-gdp-country.asp
[9] Տես նույն տեղում

2019 թ Աշխարհի երկրների մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ամբողջական ցուցակում Հայաստանը 109-րդ տեղում է, 4169 դոլար, իսկ Աշխարհի մեկ շնչի հաշվով Համաշխարհային ՀՆԱ-ի (PPP) 112 տեղում է, 10176: մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի Ամենացածր ցուցանիշն ունեն Հարավային Սուդանը 303 դոլար, մեկ շնչի հաշվով Համաշխարհային ՀՆԱ-ի (PPP) Բուրոնդին 712 դոլար:[10]

Վերոնշյալ ցուցանիշից երևում է, որ աշխարհի ժողովուրդների բարեկեցության միջև կա մեծ տարբերություն: Երկրագնդի 40% բնակչությունը գտնվում է աղքատության շեմին, քանի որ նույնիսկ ամբողջ ազգային արդյունքի հաշվով 1 շնչին 1 օրում ընկնում է 1 դոլար: Ժողովրդագրության տեսակետից դա նշանակում է մարդկանց մեծ մասի ծայրահեղ աղքատ վիճակում, այսինքն՝ գոյատևում է առանց դեղի, բարեկեցիկ կյանքի և կրթության: Ցածր մակարդակի և կյանքի որակը ունեցող երկրներում մարդիկ ունեն կյանքի մեծ դժվարություններ: Ընդհանուր առմամբ, ցածր կենսամակարդակը բացասաբար է անդրադառնում կյանքի որակի վրա: Իսկ ահա բարձր կյանքի որակ և կենսամակարդակ ունեցող երկրներում մարդիկ գոհ են և մեծ հեռանկարներ ունեն իրենց հիմնական կարիքները բավարարելու համար:

Պետք է փաստել, որ անհատների կյանքի որակի գնահատման համար միայն ՀՆԱ-ի ցուցանշները բավարար չեն: Կիրառվում են նաև սուբյեկտիվ ցուցանիշներ: Սակայն այդ ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունները միշտ չէ, որ հավաստի են և անընդհատ հավաքագրման, ուսումնասիրության կարիք կա, քանի որ ժամանակակից աշխարհը անընդհատ փոփոխվում է: Տվյալների հավաքագրումը բարդ և ժամանակատար գործընթաց է: Բնակչության կյանքից բավարարվածության տվյալների հավաքագրման բազմաթիվ մեթոդներ կան, սակայն որպես գերակա մոտեցում դեռևս համարվում է հարցաթերթը:

Կյանքի որակի ինդեքսում հարցման հարցաթերթը ընդգրկում է տարբեր գործոններ, վեց տարբեր ենթակարգեր ՝

1. Հանգստի ընտրություն,
2. Առողջություն և բարեկեցություն,

[10] https://ceoworld.biz/2019/04/11/best-quality-of-life-2019/

3. Ապահովություն և անվտանգություն,
4. Անհատական Երջանկություն,
5. Ճանապարհորդություն և փոխադրում,
6. Թվային կյանք:

Վերջինը առաջին անգամ իրականացվել է 2018 թ.-ին: Այս ցուցանիշներից յուրաքանչյուրը գնահատում են 10-բալանոց սանդղակով և դուրս են բերում երկրի համար միջին միավորը: Ըստ այդ ցուցանիշների՝ կյանքի որակի 2019 թվականի համաշխարհային ինդեքսում կյանքի որակի բավարարվածության մակարդակով ցուցակում ընդգրկվել է 189 պետություն: ՄԱԿ-ի զեկույցում նշվում է կյանքի որակի բարելավման գլոբալ միտումի մասին: Շատ բարձր կենսամակարդակով երկրների ցուցակում ընդգրկվել է 70 երկիր:

Վարկանիշային աղյուսակում Հայաստանը զբաղեցնում է 81-րդ տեղը 116,57 միավորով, Վրաստանը՝ 70-րդ, իսկ հարևան Ադրբեջանը՝ 87-րդն ,Ռուսաստանը 46 տեղում է: 2018 թվականի համեմատ Հայաստանը 2 նիշով բարելավել է իր դիրքերը: [11]

Ստորև ներկայացված է աշխարհի երկրների վարկանիշային աղյուսակը ՝ 2019 թվականի կեսի կենսամակարդակի առումով: ներառված են աշխարհի ամենազարգացած երկրները և զարգացող երկրները, որոնք բավարար քանակությամբ տվյալներ ունեն սոցիալական, տնտեսական և քաղաքական կյանքի տարբեր ոլորտներում կենսամակարդակի վերաբերյալ:

[11] https://www.un.am/hy/agency/UNDP

**Աղյուսակ 1.Երկրների վարկանիշային աղյուսակը՝ 15 պետություն [12]**

| N | Երկիր | ԿՈ ինդեքս | գնողունակություն | Անվտանգություն | Առողջություն | Կյանքի Գին | Բնակարան | Տրանսպորտ | Շրջակա միջավայր | Կլիմա |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Դանիա | 196.47 | 110.69 | 75.28 | 79.22 | 83.88 | 7.52 | 29.60 | 20.79 | 82.29 |
| 2 | Շվեյցարիա | 196.08 | 127.76 | 78.82 | 73.23 | 112.67 | 9.11 | 29.12 | 21.31 | 79.24 |
| 3 | Ֆինլանդիա | 195.06 | 108.78 | 77.25 | 75.27 | 72.18 | 7.88 | 30.62 | 11.57 | 62.79 |
| 4 | Ավստրալիա | 189.73 | 118.09 | 57.30 | 76.82 | 73.39 | 7.66 | 19.49 | 23.15 | 94.20 |
| 5 | Իսլանդիա | 188.12 | 92.03 | 76.85 | 65.66 | 97.22 | 6.41 | 25.41 | 15.65 | 68.81 |
| 6 | Ավստրիա | 187.82 | 89.88 | 76.77 | 79.46 | 72.15 | 10.64 | | 21.78 | 80.36 |
| 7 | Հնդկական երկրներ | 186.41 | 98.04 | 71.46 | 75.63 | 75.22 | 7.52 | 30.39 | 27.34 | 87.56 |
| 8 | Գերմանիա | 184.30 | 111.99 | 65.440 | 73.58 | 66.57 | 9.61 | 30.72 | 28.42 | 82.80 |
| 9 | Նոր Զելանդիա | 183.07 | 97.59 | 59.11 | 73.71 | 73.01 | 8.61 | 30.04 | 23.49 | 95.46 |
| 10 | Շվեդիա | 180.52 | 112.75 | 52.79 | 69.41 | 70.11 | 9.01 | 27.24 | 17.45 | 73.58 |
| 11 | Նորվեգիա | 179.78 | 98.00 | 66.49 | 74.36 | 140.49 | 3.54 | 25.49 | 20.29 | 71.37 |
| 12 | Էստոնիա | 178.27 | 76.75 | 77.83 | 68.49 | 50.99 | 12.83 | 32.66 | 19.88 | 64.28 |
| 13 | Միացյալ Նահանգներ | 176.77 | 119.10 | 53.27 | 69.23 | 70.95 | 9.48 | 38.64 | 35.74 | 76.75 |
| 14 | Ապոնիա | 176.46 | 97.57 | 84.09 | 80.48 | 85.52 | 10.60 | 29.30 | 36.78 | 85.26 |
| 15 | Իսպանիա | 173.56 | 79.81 | 68.93 | 78.42 | 54.74 | 7.88 | 26.70 | 39.16 | 94.55 |

Ինչպես երևում է վարկանիշային աղյուսակից Դանիան համարվում է լավագույն պետությունը՝ կյանքի որակի ապահովման ցուցանիշներով: Նրան հաջորդում են ՝ Շվեցարիան, Ֆինլանդիան(2019 թվականին ըստ «World Happiness report, Երջանկության համաշխարհային զեկույցի»-ի ճանաչվել է ամենաերջանիկ երկիրը) , Ավստրալիան և Իսլանդիան: Ինչ վերաբերում է եվրոպական երկրներին ապա նրանք զբաղեցնում են 8-րդ և 10-րդ տեղերը: Վարկանիշային աղյուսակը եզրափակում են՝ Շրիլանկան, Ֆիլիպինները, Վիետնամը, Ղազախստանը և վերջին տեղում է Իրանը:

[12] https://www.internations.org/expat-insider/2019/quality-of-life-index-39831

**Աղյուսակ 2 Երկրների վարկանիշային աղյուսակը՝ 5 պետություն**

| N | Երկիր | ԿՌ ինդեքս | գնողունակություն | Ապահովածություն | Առողջություն | Կյանքի Գին | Բնակավայր | Տրանսպորտ | Շրջակա միջավայր | Կլիմա |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Շիրի Լանկա | 95.3 | 26.32 | 27.34 | 51.9 | 57.69 | 59.11 | 58.97 | 72.3 | 30.24 |
| 2 | Ֆիլիպիներ | 90.73 | 21.83 | 29.46 | 44.15 | 74.47 | 60.23 | 59.17 | 65.87 | 35.09 |
| 3 | Վիետնամ | 88.82 | 19.66 | 33.33 | 28.33 | 87.13 | 71.24 | 51.22 | 54.54 | 37.7 |
| 4 | Ղազախստան | 87.17 | 11.51 | 38.83 | 29.75 | 74.25 | 39.78 | 33..49 | 51.27 | 29.83 |
| 5 | Իրան | 87.02 | 16.87 | 37.74 | 48.38 | 79.35 | 70.99 | 50.67 | 51.18 | 35.8 |

Վարկանիշային աղյուսակում Հայաստանը զբաղեցնում է 81-րդ տեղը 116,57 միավորով, Վրաստանը՝ 71-րդ, իսկ հարևան Ադրբեջանը՝ 87-րդն, Ռուսաստանը 46 տեղում է: 2018 թվականի համեմատ Հայաստանը 2 նիշով բարելավել է իր դիրքերը:[13] Հայաստանի Հանրապետության կյանքի որակի ցուցանիշերը 2020թվականի հունվարի դրությամբ, ՄԱԿ-ի «Մարդկային զարգացման ինդեքսի»[14] համաձայն ունի հետևալ միավորները ՝

1. Կյանքի որակ -116,57
2. Գնողունակություն-28.05
3. Անվտանգություն- 78.40
4. Առողջություն -51.38
5. Գույքի գինը եկամտի հարաբերակցությամբ -16.62
6. Տրանսպորտ -31.11
7. Շրջակա միջավայր-60.23
8. Կլիմա-63.42

Օրինակ «Ցեովորդ»[15] ստատիկ հետազոտությունների ամսագիրը նույնպես կատարում է ամենամյա ուսումնասիրություններ (հետազոտությունը կատարվել է 70

[13] https://www.un.am/hy/agency/UNDP
[14] https://www.numbeo.com/quality-of-life/country_result.jsp?country=Armenia
[15] https://ceoworld.biz/2019/04/11/best-quality-of-life-2019/

պետությունների միջև), որի նպատակն է բացահայտել ներգաղթողների ապրելու համար լավագույն երկիրը:

Ըստ կատարված հարցումների պարզվել է, որ ներգաղթողները հաճախ առաջնորդվում են իրենց կյանքի մակարդակի և որակի ցուցիչով, երբ ընտրում են այս կամ այն երկիրը իրենց հավանական բնակության վայրի համար: Այնուամենայնիվ, այստեղ կարևոր է հասկանալ, որ երկրներում ապրելու պայմանները, ներառյալ կյանքի որակը, կարող են տարբեր լինել երկրի բնիկ և մշտական բնակիչների և այլ երկրների այցելուների համար: Հետևաբար, բացի աշխարհի երկրների վարկանիշից՝ կյանքի որակի առումով, կա նաև արտագաղթի լավագույն երկրների վարկանիշ:[16]

[16] https://www.internations.org/expat-insider/2019/quality-of-life-index-39831

# ԳԼՈՒԽ 2. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ և ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ՎՐԱ:

## *2.1. Բնակչության եկամուտների սպառման , բաշխման մոդելավորումը և կանխապեսումը:*

Կյանքի որակը բնութագրվում է տնտեսական ցուցանիշներով՝ բնակչության եկամուտների մեծությամբ, բնակչության աղքատության և հարստության մակարդակով և ունեցվածքի շերտավորումով:

Ժամանակակից պայմաններում, երբ զարգացած հասարակության հիմնական բնութագիրը նրա սոցիալական կողմնորոշումն է, ապա հատուկ ուշադրություն պետք է դարձնել նյութական աղբյուրներին, որոնք ապահովում են բարեկեցությունը: Աղբյուրներից մեկը, առաջին հերթին, բնակչության եկամուտներն են: Հետևաբար, բնակչության (հասարակության) բարեկեցությունը բնութագրելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել կենսապահովման աղբյուրները: Դրանք առավելագույնս են արտացոլում եկամտի և բարեկեցության միջև եղած կապը, քանի որ եկամուտը՝ մարդկանց կյանքից բավարարվածություն ստանալու, բազմազան կարիքների ու հետաքրքրությունները բավարարելու գործոնն է, և հասարակության զարգացման համար առանձնահատուկ չափորոշիչ:

Բացի այդ, եկամուտը ուղղակիորեն կապված է տնտեսական աճի, կապիտալի կուտակման և այլ ռեսուրսների հետ: Հետևաբար, եկամտի աճի համար հիմք է հանդիսանում նյութական արտադրությունը, որը դառնում է նյութական բարեկեցություն հիմք:

Ըստ Ա. Սմիթի Անհատի եկամուտները կախված են «աշխատուժի չափից, որը նա կարող է տնօրինել կամ, որը նա կարող է գնել, ինչպես նաև նրանց աշխատանքի արտադրանքը տնօրինելու ունակությունից:»[17] Նա իր «եկամտի քանակական չափման

[17] Иванов В.Н., Суворов А.В. Неравенство и бедность населения: опыт решения проблемы в России и за рубежом // Проблемы прогнозирования. – 2006. – № 3. – С. 144. – 150

առանձնահատկությունն» աշխատության մեջ նշել է, որ եկամուտը ինքնին ունի գործոնային ծագում, և դրանց բաշխումը կատարվում է ըստ շուկայական արժեքների:

Ներկայումս ևս բնակչության եկամտի կամ սպառման բաշխման հիմնահարցերի շարքում եկամտի բաշխման գնահատումը խիստ արդիական է, որը կապված աշխարհում ավելի ու ավելի ինտենսիվորեն խորացող ու թափ հավաքող գլոբալացման և տնտեսական ինտեգրման պայմաններում մեծ նշանակություն ու կարևորություն է ստանում:

Բնակչության եկամտի կամ սպառման բաշխումն առանձին խմբերի միջև, հասկանալի պատճառներով, ունի որոշակի օրինաչափություններ և սահմաններ: Դրանով է պայմանավորված շուկայական տնտեսության պայմաններում պետության կարևորագույն գործառույթներից մեկը, երբ պետական կարգավորման տարբեր լծակների և մեխանիզմների միջոցով հասարակության ներսում, բնակչության տարբեր շերտերի միջև ապահովվում է եկամտի կամ սպառման բաշխման որոշակի սահման: Այդ օրինաչափությունները սանմանելիս կիրառվում է բնակչության եկամտի կամ սպառման բաշխման չափման կամ գնահատման տարբեր մեթոդներ և գործակիցներ: Որևէ երկրի, կամ էլ տարբեր երկրների միմյանց հետ համադրելիս, այդ թվում նաև պաշտոնական վիճակագրության կողմից, օգտագործվում են տարբեր ցուցանիշներ: Համեմատելիս հաշվի ե առնվում , տվյալ երկրի բնակչության կամ երկրների ամենահարուստ 5%-ի եկամտի կամ սպառման բաշխման մակարդակը ամենաաղքատ 5%-ի եկամտի կամ սպառման մակարդակի հետ: Հաջորդ ցուցանիշը, որն ավելի հաճախ է օգտագործվում բնակչության եկամուտների և ծախսերի բաշխման գործընթացը գնահատելու համար, դա ըստ դեցիլային (10%) խմբերի բաժանումն է: Օրինակ, ԱՄՆ-ում 2018թ. 1 շնչի հաշվով եկամուտը[18] ըստ դեցիլային խմբերի բաժանվել է հետևյալ կերպ. ամենաաղքատ 10%-ին (կամ I դեցիլին) բաժին է ընկել եկամտի 20%-ը, իսկ ամենահարուստ 10%-ին՝ 30,9-ը (կամ

[18]Անհրաժեշտ է նշել, որ որոշակի տարբերություն գոյություն ունի Համաշխարհային բանկի մասնագետների և ՀՀ ԱՎԾ-ի մասնագետների կողմից օգտագործվող ցուցանիշների միջև: Այսպես, Համաշխարհային բանկի մասնագետներն օգտագործում են «եկամտի կամ սպառման բաշխում» («Distribution of income or consumption») արտահայտությունը (տե՛ս օրինակ, WORLD DEVELOPMENT INDICATORS, 2018, The World Bank, էջ 94-96, իսկ ՀՀ ԱՎԾ-ի մասնագետները՝ «Բնակչության եկամուտների և ծախսերի բաշխում» արտահայտությունը (տե՛ս, մասնավորապես, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2018, Եր., ՀՀ ԱՎԾ, 2018, էջ 92):

տարբերությունը կազմել է 16,7 անգամ): Պարզելով բնակչության եկամտի կամ սպառման բաշխման ամենահարուստ և ամենաաղքատ 10%-ների բաժինները, և ստացված քվանտային գործակցի (այն անվանում է նաև «արդարության» գործակից) մեծությունից ելնելով պարզ է դառնում թե հասարակության ներսում ինչպես են բաշխվում եկամուտը կամ սպառումը: Տեսականորեն, «արդարության» սահմանը 1-ն է, որը վկայում է, որ եկամուտը կամ սպառումը բաշխվել է հավասարաչափ: Ըստ որի, որքան փոքր է այդ գործակիցը, այնքան արդար է տվյալ հասարակությունը կամ երկիրը:

***Ջինիի գործակից.*** Հաջորդ գործակիցը, որը կիրառվում է բնակչության եկամտի սպառման կամ բախշման փաստացի, օբյեկտիվ գնահատականը ստանալու համար Ջինիի գործակիցն է: Քանի որ բնակչության եկամտի կամ սպառման բաշխումն առանձին խմբերի միջև, հասկանալի պատճառներով, ունի որոշակի օրինաչափություններ և սահմաններ: Դրանից ելնելով շուկայական տնտեսության պայմաններում պետության կարևորագույն գործառույթներից մեկը, երբ պետական կարգավորման տարբեր լծակների և մեխանիզմների միջոցով հասարակության ներսում, բնակչության տարբեր շերտերի միջև ապահովվում է եկամտի կամ սպառման բաշխման որոշակի սահման: Մասնագիտական գրականության մեջ այն ստացել է Ջինիի գործակից (աղքատության գնահատման հիմնական ցուցանիշ՝ ՀՆԱ-ն ) անվանումը[19]:

Ջինիի գործակիցը ցույց է տալիս եկամուտների անհավասարաչափ բաշխումը հարուստ և աղքատ խավերի միջև և բացահայտում, թե համախառն ( նաև դրամական) եկամուտների կամ սպառման բաշխումը բնակչության առանձին խմբերի մոտ ինչպես են կենտրոնացված: Եթե գործակիցը ձգտում է 0-ի, ապա եկամուտները հավասարաչափ են բաշխվում, իսկ եթե ձգտում է 1-ի՝ ծայրահեղ անհավասար:[20] Այս գործակիցը ցույց է տալիս եկամուտների անհավասարաչափ բաշխումը հարուստ և աղքատ խավերի միջև Համաշխարհային բանկի տվյալներով՝ 2018 թվականին ամենամեծ ՀՆԱ-ն ունեցել է ԱՄՆ-ն (19,417.144 միլիարդ ԱՄՆ դոլար), երկրորդը այս ցուցանիշով Չինաստանն է

[19]Ա.Մարկոսյան, Տնտեսագիտություն բոլորի համար. Երկրորդ՝ բարեփոխված և լրամշակված հրատարակություն, Եր., «Տիգրան Մեծ», 2006, էջ 153-154:

[20] Ա.Մարկոսյան, Տնտեսագիտություն բոլորի համար. Երկրորդ՝ բարեփոխված և լրամշակված հրատարակություն, Եր., «Տիգրան Մեծ», 2006, էջ 153-154:

(11,795.297 միլիարդ ԱՄՆ դոլար), այնուհետև՝ Ճապոնիան (4,841.221 միլիարդ ԱՄՆ դոլար): Ամենափոքր ՀՆԱ գրանցած երկիրն է Տուվալուն (0.036 միլիարդ ԱՄՆ դոլար): 2019թ ամբողջ աշխարհի ՀՆԱ-ն կազմել է 77,988 տրիլիոն դոլար, որը 2018 թվականի համեմատ (74 տրիլիոն) աճել է 3,988 տրիլիոն դոլարով: Վերջին 50-ամյակում այս ցուցանիշը աճել է մոտ 55 անգամ: Այս աճը պայմանավորված է մի շարք գործոններով՝ աշխարհի բնակչության աճ, ինչի շնորհիվ մեծացել է աշխարհում արտադրվող բարիքների ծավալը, տեխնոլոգիական առաջընթաց և, իհարկե, սպառողական գների աճ: Աշխարհի երկրների բնակչության եկամտի կամ սպառման բաշխումը ըստ այդ ցուցանիշների ամենաբարձր և ամենացածր 10%-ների ցույց է տալիս[21], որ աշխարհում այնքան էլ շատ չեն այն երկրները, որտեղ պահպանվում է «արդարության» սահմանը:

Դրանք են՝ Խորվաթիա (6,4), Չեխիա (5,3), Ֆինլանդիա (5,7), Եթովպիա (6,2), Հունգարիա (5,6), Ճապոնիա (4,5), Նորվեգիա (6,0), Սլովակիա (6,7), Բելառուսիա (6,4), Բանգլադեշ (6,2), Ադրբեջան (2,9), Սերբիա (6,0), Շվեդիա (6,2), Ուկրաինա (5,8): գ Ռուսաստան 0,39 է, ԱՄՆ-ում՝ 0,4, Մեծ Բրիտանիայում՝ 0,32, Բրազիլիայում՝ 0,6: Պետք է նշել, որ համաշխարհային բանկի կողմից կատարված ուսումնասիրության մեջ ընդգրկված 186 երկիր:[22] Ըստ կատարված ուսումնասիրության պարզ է դառնում , որ Հայաստանում եկամուտներն ավելի հավասարաչափ են բախշվում, քան ԱՄՆ-ում կամ Ռուսաստանում:

Հայաստանի վիճակագրական կոմիտեի տարեկան տեղեկատվության համաձայն վերջին տարիներին Հայաստանում Ջինիի գործակիցը տատանողական է, և դեպի նվազում է տանում: 2009 թ. ըստ եկամուտների կազմում է 0.335 2010 թ. կազմել է 0,362, 2011 0.333 Հայաստանում հարուստ և աղքատ խավերի միջև բևեռացումն ավելի է խորացել: 2014թ.-ին ՀՀ-ում Ջինիի գործակիցն, ըստ եկամուտների, կազմել է 0.373, իսկ ըստ սպառման՝ 0.277: Հետևաբար՝ Հայաստանում բնակչության անհավասարությունն ավելի խորն է ըստ եկամուտների ցուցանիշի՝ սպառման ցուցանիշի համեմատ: Այնուամենայնիվ, աղքատության մակարդակը, համաձայն Համաշխարհային բանկի տվյալների, 2018թ-ին ՀՀ-ում կազմել է 23.9 տոկոս՝ 2017թ-ի 22.6 տոկոսի համեմատ:

---

[21]WORLD DEVELOPMENT INDICATORS, 2010, The World Bank, pp. 94-96.

[22] https://www.internations.org/expat-insider/2019/quality-of-life-index

Հայաստանի Հանրապետության կառավարությունը աղքատության հաղթահարման համար առաջնորդվում է «ՀՀ 2014-2025թթ հեռանկարային զարգացման» ծրագրով : Բացի վերոնշյալ գործակիցներից գոյություն ունեն որոշակի այլ գործոններ, որոնք խթան են հանդիսանում հասարակության եկամուտների անհավասարության առաջացմանը.

1. Ընդունակությունների տարբերությունները: Մարդկանց ֆիզիկական, մտավոր, գեղագիտական ընդունակությունները տարբեր են, հետևաբար նրանց վաստակած եկամուտների տարբերակվածությունը ակնհայտ է:

2. Կրթությունը և ուսուցումը: Մարդիկ իրենց ձեռք բերած կրթությամբ և մասնագիտական ունակություններով իրարից տարբերվում են, հետևապես տարբեր է նաև նրանց եկամուտը:

3. Աշխատունակությունը և ռիսկը: Ելնելով աշխատունակության տարբերություններից, եկամուտները կարող են լինել տարբեր: Մարդիկ, ովքեր պատրաստ են կատարել ծանր, հոգնեցուցիչ աշխատանք, նրանք ստանում են բարձր աշխատավարձ: Որոշ մարդիկ էլ, ձգտելով բարձր եկամուտների, դիմում են տնտեսական ռիսկի իրենց ֆինանսական միջոցները կիրառելով բիզնեսի բնագավառում:

4. Սեփականության տիրապետությունը: Մարդկանց ճնշող մեծամասնությունն ունի շատ փոքր մասնավոր սեփականություն կամ զուրկ է դրանից, իսկ մնացած փոքր մասը ունի մեծ քանակությամբ ֆիզիկական և դրամական կապիտալի: Շուկայական տնտեսության պայմաններում, հատկապես սեփականությունից ստացված եկամուտներն են որոշում մարդկանց եկամուտների տեսակարար սահմանը:

Այն, որ «հարստությունն է ծնում հարստություն», ավելի է ուժեղացնում եկամուտների բաշխման անհավասարության մեխանիզմը:[23]

Կարելի է ասել ,որ բնակչության եկամտի աղբյուրները տարբեր են՝

- Տրանսֆերտներ,
- Սեփականություն և ձեռնարկատիրություն (վարձակալում , տոկոսներ, շահաբաժին),

[23] Рынок труда и социальная политика в Центральной и Восточной Европе. Переходный период и дальнейшее развитие. Под ред. Н. Барра. М., 1997, с. 95

- Կենսաթոշակ և նպաստ,
- Գյուղմթերք և գյուղատնտեսություն,
- Ինքնազբաղվածություն,
- Վարձու աշխատանքից,
- Այլ եկամուտներ:

Շուկայական հարաբերությունների անցումային տնտեսության մեջ մեծ նշանակություն ունի ձեռնարկատիրական գործունեությունից և գույքից ստացվող եկամուտը: Քանի որ շահույթը հանդես է գալիս որպես ձեռնարկատիրության զարգացման կարևոր ցուցիչ: Այն կարևոր տեղ է գրավում՝ հանդիսանալով տնտեսական ոլորտում նշանակալի խթան: Ձեռնարկատիրությունից ստացված շահույթը զգալիորեն գերազանցում է եկամտի ցանկացած այլ տեսակների, բայց դրա հիմնական նպատակն է խթանել համապարփակ տնտեսական գործունեությունը: Իսկ սոցիալական տրանսֆերտները՝ որպես եկամտի ու գոյատևման աղբյուր, հատկապես կարևոր են աղքատ բնակչության համար:

Հայաստանում բնակչության առավել տարածված եկամտի աղբյուրն աշխատավարձն է, ընտանիքների 56.4%-ը:

Տարածվածությամբ երկրորդ եկամտի աղբյուրը՝ պետական տրանսֆերտներն են, այդ թվում. տարիքային թոշակ ստացող անդամ ունի ընտանիքների 38.1%-ը, հաշմանդամության թոշակ՝ 19.6%-ը, ընտանեկան նպաստ է ստացել ընտանիքների 15.7%-ը: Թոշակ ստացող անդամ ունեցող ընտանիքների հարաբերական քանակը համարյա չի փոխվել, սակայն աճել է ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը:[24]

Պետական տրանսֆերտներն անհրաժեշտություն են սոցիալական ողջամիտ պայմանների համար դրանց բացակայության դեպքում հնարավոր չի լինի ընդլայնել վերարտադրությունը, որը որոշում է կյանքի որակի ձևավորումը:

## *2.2. Աղքատությունը ՝որպես տնտեսական և սոցիալական կատեգորիա:*

[24] https://www.gov.am/u_files/file/documents/IPSC_Q%D6%85LI%207-16_Final%20Report_05_05_2017_Website.pdf էջ 83-83

Աղքատությունը համաշխարհային հանրության առջև ծառացած կարևորագույն հիմնախնդիրներից է, որի հաղթահարման արդյունավետ ուղիները համաշխարհային հանրությունը փնտրում և դեռ պետք է փնտրի գուցե տասնամյակներ: Անկախ սոցիալական կարգից այն բնորոշ է ցանկացած հասարակարգի:

Ըստ Պլատոնի, հարուստների և աղքատների բաժանվելը ցանկացած պետության հատկանիշն է. «Ինչպիսին էլ լինի պետությունը, նրանում միշտ կա երկու պետություն՝ միմյանց հանդեպ թշնամական. մեկը հարուստների պետությունն է, մյուսը՝ աղքատների», նրանք ապրում են միասին և իրար դեմ դավեր նյութում: Արիստոտելը նույնպես կարևորել է սոցիալական անհավասարության հարցը և ընդգծել, որ բոլոր պետություններն ունեն երեք դաս՝ հարուստներ, աղքատներ և միջին խավ: Այս տեսակետից պետությունը պետք է հոգ տանի աղքատների մասին, քանի որ աղքատությունը ծնում է հանցագործություններ և ապստամբություններ, իսկ աղքատության բարձր մակարդակ ունեցող երկրները դատապարտված են կործանման:[25]

Ըստ համաշխարհային բանկի աղքատությունը արտահայտվում է որպես.

- եկամուտների, սպառման և ծախսերի ցածր մակարդակ, արտադրական և անձնական գույքի բացակայություն կամ անբավարարություն, սոցիալական կապիտակի ցածր մակարդակ.
- սոցիալական ծառայությունների ցածր մատչելիություն, անհրաժեշտ նվազագույն կրթություն ստանալու և առողջության բավարար մակարդակ ապահովելու սահմանափակ հանրավորություններ.
- անվտանգության ցածր մակարդակ, տարբեր ռիսկերից պաշտպանվածության ցածր աստիճան.
- ազդեցության ցածր մակարդակ տնտեսական և հասարական, ազդեցություն ունեցող կառույցների գործունեությանը մասնակցության, դրանց որոշումների վրա ազդելու հնարավորությունների պակաս[26]

[25] Ишмуратова В. Г Содержание категории «бедность» в новейшей истории России, «Проблемы современной экономики», Санкт-Петербург, 2010г. ст,75-76
[26] Рынок труда и социальная политика в Центральнойи Восточной Европе, Москва 1997, с. 32.

Նշված սահմանումից կարելի է եզրակացնել, որ աղքատությունը կենսաբանական, սոցիալական, հոգևոր-մշակութային նվազագույն պահանջմունքները բավարարելու անհնարինությունն է: Այսինքն աղքատությունը կենսամակարդակի չափանիշ է, տեսակ, որն արտահայտվում է այն փաստով, որ որոշակի ընտանիքի, խմբի, հասարակական շերտի եկամուտը չի հասնում այդ արժեքին, ցածր է պարենային գծից և չի ապահովի նրանց կենսունակությունը լիարժեք: Աղքատ են գնահատվում այն անձինք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է աղքատության վերին ընդհանուր գծից, իսկ ծայրահեղ աղքատ կամ թերսնված՝ ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է աղքատության պարենային գծից:

Թեև մի շարք երկրներում և տարածաշրջաններում եկամուտների բաշխման անհավասարության և աղքատության դեմ պայքարը հասել է զգալի հաջողությունների, սակայն, հատկապես ծայրահեղ աղքատությունն այսօր էլ մնում է քաղաքակրթության դժվար լուծելի խնդիր, և դեռևս մեծ է այն մարդկանց թիվը, որոնք օրական ստանում են մեկ ԱՄՆ դոլարից պակաս եկամուտ, սոված են, չունեն նվազագույն ապրուստի համար անհրաժեշտ տարրական միջոցների՝ սննդի, ջրի, էլեկտրաէներգիայի սպառման հնարավորություն և զրկված են նորմալ սանիտարահիգիենիկ պայմաններում ապրելու հնարավորությունից: Բավական է նշել, որ 1981թ.-ին աշխարհում օրական 1.25 դոլարից (գնողունակության համարժեքով հաշվարկված) պակաս ծախսած բնակչության ընդհանուր թվաքանակը կազմել է 1.9 մլրդ մարդ կամ բնակչության ամբողջ թվաքանակի 51.9%-ը, Չինաստանում այդ թվերը կազմել են համապատասխանաբար 835 մլն և 84.0%-ը: Նշված թվերը աշխարհի և Չինաստանի համար 2018թ.-ին կազմել են 1,374 մլրդ և 25.2%, 208 մլն և 15.9%: Օրական 2 դոլարից (գնողունակության համարժեքով հաշվարկված) պակաս ծախսած բնակչության թվաքանակը 1981թ.-ին կազմել է 2,542 մլրդ մարդ կամ աշխարհի բնակչության 69.4%-ը: Այդ թվերը 2018թ.-ին կազմել են 2,564 մլրդ և 47.0%, որից 385 միլիոնը երեխաներ են, որոնք դեռևս ապրում են օրական 1,90 դոլարից ցածր եկամտի սահմաններում:[27] Այսօր աղքատության խնդրին անհրաժեշտ ուշադրությունը չդարձնելու դեպքում, կանխատեսվում է, որ 2030-ական

[27]World Development Indicators 2018, The World Bank, pp. 92.

թթ., ծայրահեղ աղքատության մեջ ապրելու է մոտ 167 միլիոն երեխա և 5 տարեկանից փոքր 69 միլիոն երեխա կմահանա մանկական մահացության կանխարգելիչ պատճառներից: Նման հետևանքները արդյունքում կնվազեցնեն ապագա սերունդների ներուժը:

Եթե հաշվի առնենք աղքատության այս ցուցանիշներն, ապա կստացվի, որ աղքատության բացարձակ ցուցանիշներն ավելացել են (իհարկե զարմանալի կարող է թվալ, սակայն փաստ է, որ XXI դարի աշխարհի բնակչության Մոտ 758 միլիոն մարդ, այդ թվում 114 միլիոն երիտասարդ, դեռևս չեն տիրապետում գրի և ընթերցանության բազային հմտություններին[28]:

Ըստ աղքատության բուրգի, աշխարհի բնակչության մեծ մասը՝ 4 մլրդ մարդ վաստակում են մեկ մարդու հաշվով տարեկան 1500 դոլարից պակաս եկամուտ և կազմում են եկամտային բուրգի հիմքը: Բուրգի երկրորդ մակարդակում են գտնվում 1,5-1,75 մլրդ մարդ, որոնք ապրում են մեկ մարդու հաշվով տարեկան 1500-ից 20000 դոլարով: Վերին հատվածում են գտնվում զգալիորեն քիչ թվով մարդիկ՝ 75-ից 100 մլն և ստանում են մեկ մարդու հաշվով տարեկան 20000 դոլարից ավելի եկամուտ[29]:

---

[28]Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2004 թվականի հունվար-դեկտեմբերին, տեղեկատվական ամսական զեկույց, ՀՀ ԱՎԾ, 2005, էջ 217:

[29]Содействие развитию предпринимательства: Бизнес, работающий на ведных. Отчет для генерального секретаря Обьединенных Нации, UNDP, New York, 2004




**Գծապատկեր 1. Աղքատության բուրգը ըստ աշխարհի բնակչության թվի եկամուտների**

Եթե ներկայացնենք Հայաստանի Հանրապետության աղքատության մակարդակը, ապա պետք է նշել, որ լինելով զարգացող և անցումային տնտեսությամբ երկիր, աղքատության օբյեկտիվ պատճառները տարբեր են: Առանձնացվում են մի շարք ներքին և արտաքին գործոններ. 1988թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժը, պատերազմական իրավիճակը, փախստականների ներհոսքը, սահմանների մեծ մասի շրջափակումը հարևան երկրների՝ Թուրքիայի և Ադրբեջանի կողմից, դրամափոխությունը, որի հետևանքով մեկ օրում մարդկանց տասնյակ տարիներով կուտակած ավանդները փոշիացան, էներգետիկ ճգնաժամը, և այլ գործոններ, որոնք նպաստել են աղքատության խորացմանը :

2019 թվականի «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» զեկույցում ամփոփ ներկայացված է Հայաստանի աղքատության մակարդակի գնահատականը և սոցիալական վիճակի ու կենսապայմանների փոփոխությունները 2008-2018թթ. ժամանակահատվածում: Զեկույցում օգտագործվել է Աշխատանքի և սոցիալական հարցերի, Առողջապահության, Կրթության, գիտության, Մշակույթի և

սպորտի նախարարությունների կողմից տրամադրված տեղեկատվությունը: Զեկույցը շարադրվել է Համաշխարհային բանկի վերլուծական և տեխնիկական աջակցությամբ:[30]

Հայաստանում հստակ տարբերակվում են աղքատության երեք աստիճան. ընդհանուր աղքատություն, չափավոր աղքատություն և ծայրահեղ աղքատություն: Չնայած ըստ կատարված հետազոտությունների և ներկայացված ցուցանիշների որոշ նվազեցման միտումներ կան, մտահոգիչ է մնում մեկ այլ երևույթ: Դա աղքատության գնահատման ոչ իրատեսական ցուցանիշներն են*: Ըստ ցուցանիշների* Հայաստանում 2018-ն աղքատ են համարվել նրանք, ում ամսական սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է աղքատության վերին գծից՝ 42 621 դրամ: Չափավոր (կամ շատ) աղքատ են գնահատվել նրանք, ում ամսական սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության ստորին գծից՝ 35 071 դրամ, ծայրահեղ աղքատ են գնահատվել նրանք,

ում ամսական սպառումը մեկ չափահաս անձի հաշվով 24 827 դրամից ցածր է եղել:

[30] https://www.armstat.am/file/doc/99517138.pdf

**Աղյուսակ 3. Աղքատության գծերը 2008-2018 թթ. ժամանակահատվածում, մեկ չափահաս անձի հաշվով, մեկ ամսվա համար (դրամ)**[31]

| | Աղքատության գծերը | | |
|---|---|---|---|
| | **Աղքատության պարենային կամ ծայրահեղ գիծ** | **Աղքատության ստորին գիծ** | **Աղքատության վերին գիծ** |
| *2008թ.* | *17 640* | *24 388* | *29 903* |
| *2009թ.* | *17 483* | *25 217* | *30 920* |
| *2010թ.* | *19 126* | *27 410* | *33 517* |
| *2011թ.* | *21 306* | *29 865* | *36 158* |
| *2012թ.* | *21 732* | *30 547* | *37 044* |
| *2013թ.* | *22 993* | *32 318* | *39 193* |
| *2014թ.* | *23 384* | *33 101* | *40 264* |
| *2015թ.* | *24 109* | *34 234* | *41 698* |
| *2016թ.* | *23 313* | *33418* | *40 867* |
| *2017թ.* | *24 269* | *34253* | *41 612* |
| *2018թ.* | *24 827* | *35071* | *42 621* |

Ազգային վիճակագրական կոմիտեի հրապարակած 2019 թվականի Հայաստանի սոցիալական պատկեր և աղքատություն զեկույցում, 2018թ. աղքատության մակարդակը գնահատվել է 23,5% և 2017-ի համեմատ նվազել է 2,2 տոկոսային կետով, իսկ 2008թ. աղքատության մակարդակի համեմատ (27,6%) նվազել է 4,1 տոկոսային կետով:

2018-ին աղքատների ընդհանուր թիվը կազմել է մոտ 700 000 մարդ (մշտական բնակչության ցուցանիշի հաշվով), նրանցից չափավոր աղքատների թիվը (ներառյալ ծայրահեղ աղքատները)՝ 315 000, իսկ վերջիններից ծայրահեղ աղքատների թիվը՝ 30 000 մարդ: Նախորդ տարվա համեմատ նվազել է ինչպես աղքատների ընդհանուր թիվը, այնպես էլ չափավոր և ծայրահեղ աղքատների թիվը:

2017թ. ընդհանուր թիվը կազմել է 766 000 մարդ, ծայրահեղ աղքատների թիվը՝ մոտ 42 000 մարդ:

[31] Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2019,

2018-ին 16 և բարձր տարիքի մարդիկ նշել են, որ շատ լավ ապրելու համար մեկ մարդուն անհրաժեշտ է 589 000 դրամ (1 220 դոլար), լավ ապրելու համար՝ 246 000 դրամ (509 դոլար), գոյատևելու համար՝ 99 000 դրամ (205 դոլար): 5 տարի առաջ՝ 2014-ին, 16 և բարձր տարիքի բնակչությունը նշել էր, որ շատ լավ ապրելու համար մեկ մարդուն պետք է 1 298 000 դրամ կամ 3 120 դոլար, լավ ապրելու համար՝ 294 000 դրամ կամ 707 դոլար, իսկ գոյատևելու համար՝ 85 000 դրամ կամ 205 դոլար:

Վիճակագրական կոմիտեի զեկույցում նշվում է, որ աղքատության հաղթահարման համար Հայաստանին անհրաժեշտ է 63,2 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 1,1% կազմող գումար՝ ի լրումն սոցիալական աջակցության համար արդեն, իսկ հատկացված միջոցների՝ ենթադրելով, որ սոցիալական աջակցությունը բարձր հասցեականությամբ կտրամադրվի միայն աղքատներին: Ծայրահեղ աղքատության վերացումը կպահանջի 1,0 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 0,02%-ը՝ի հավելումն ծայրահեղ աղքատներին արդեն իսկ ուղղված սոցիալական աջակցության և ապահովելով բարձր հասցեականություն:

Նկատենք, որ աղքատության սուբյեկտիվ գնահատականով մարդիկ նշել են, որ գոյատևելու համար մեկ անձին ամսական պետք է 99 000 դրամ՝ ավելի քան երկու անգամ մեծ գումար, քան կազմում է աղքատության վերին գիծը:

***Աղքատությունը հաղթահարելու ուղիները:*** Վերջին տարիներին աղքատության դեմ պայքարը դարձել է երկրների միջև երկխոսության հիմնական թեման. աղքատության դեմ պայքարը է դարձել է հետագա զարգացման հիմնական նպատակը: Ասվածի վառ օրինակն է ՄԱԿ-ի «Հազարամյակի հռչակագիրը», որը դարձավ աղքատության վերացման համընդհանուր նպատակի ամրագրման արտահայտությունը: Ինչպես հարուստ, այնպես էլ աղքատ պետություններն իրենց պատրաստակամությունը հայտնեցին աղքատության վերացման, մարդկանց մեջ արժանապատվության ամրապնդման, խաղաղության, հավասարության հասնելու և բնապահպանական հավասարակշռությունը պահպանելու համար բարենպաստ պայմաններ ստեղծելու գործում:

Խոսելով աղքատության պատճառների և դրա հաղթահարման հեռանկարի մասին, անհրաժեշտ է հստակ տարբերակել այս խնդրի երկու անկախ կողմերից ՝մի կողմից բազմակի զրկանքներ ապրող մարդկանց թվի օբյեկտիվ նվազեցում, մի կողմից

և «գծի վրա» կամ «աղքատության տակ» ընկալման զգացումը որպես սուբյեկտիվ, սոցիալ-հոգեբանական երևույթ, որը կապված է աղքատության իրական մակարդակի հետ, ոչ ավելին, քան մի շարք այլ գործոններով: Ներկայումս ամբողջ աշխարհի ուշադրությունը կենտրոնացած է միայն «օբյեկտիվ» աղքատության դեմ պայքարի վրա, ինչը նույնպես հասկացվում է որպես առկա եկամուտների և պաշտոնապես հաստատված կենսամակարդակի միջև ձևավորված անհամապատասխանություն: Խնդրի նման հայտարարությունը, որը կիրառվում է «օբյեկտիվ» աղքատության նկատմամբ, ինչպես սխալ է, այնպես էլ անբավարար:

Այնուամենայնիվ, իրականում «սուբյեկտիվ» աղքատությունը շատ վտանգավոր է նաև ապագայում երկրի սոցիալ-տնտեսական զարգացման համար, և դրա դեմ պայքարելը ինքնուրույն և շատ դժվար գործ է, որի նշանակությունը դեռևս բավարար չափով չի հասկացվում պետական կառույցների, մասնագետների և լայն հասարակության կողմից: Պետք է նշել, որ աղքատությունը ինքնին վտանգավոր երևույթ չէ: Աղքատության դեմ պայքարը նույնպես անհրաժեշտ է ոչ միայն այն պատճառով, որ դա թելադրված է սոցիալական կայունության կամ մարդասիրական նկատառումներով, այլ աղքատությունը հանդիսանում է խթան երկրի և մարդու զարգացման գործում: Եթե մենք անտեսում ենք տնտեսական նկատառումները ՝կապված այն փաստի հետ, որ աղքատությունը նպաստում է ներքին շուկայի մակարդակի, երկրի քաղաքական դիրքի վրա: Տնտեսագիտական գրականության վերլուծությունները ցույց են տվել, որ աղքատության նվազեցման հիմնական գործիքները բաժանվում են երեք խմբերի.

- Տնտեսական գործիքներ՝ աշխատաշուկայի վրա ներազդեցություն, զբաղվածության մակարդակի բարձրացում, աշխատավարձի բարձրացում, տնտեսական աճ, տնտեսության ճյուղերի զարգացում,
- Սոցիալական գործիքներ՝ նպատակային սոցիալական աջակցության տրամադրում, սոցիալական նպաստների վճարման ծրագրեր, կենսաթոշակային համակարգի արդյունավետության բարձրացում, առողջապահության, կրթության, բնակարանային պայմանների բարելավման, անվտանգության, ենթակառուցվածքների զարգացում
- Ֆինանսական գործիքներ՝ վարկային համակարգ, միկրովարկեր:

Առանձնապես բնակչության աղքատության մակարդակի վրա ներգործություն են ունենում ՀՆԱ-ի փոփոխությունը, զբաղվածության մակարդակը, տրանսֆերտները, երկրի սոցիալական քաղաքականությունը, աշխատավարձը և այլն: Ընդ որում, կոնկրետ միջոցառումներ առաջարկելիս պետք է շեշտը դնել այն ուղղությունների վրա, որոնցում պետությունը ունի մրցակցային առավելություններ՝ միաժամանակ նվազագույնի հասցնելով թույլ և խոցելի կողմերը: Գյուղատնտեսությունը, եկամուտների վերաբաշխման համակարգը, ներդրումային քաղաքականությունը, կրթության բնագավառը, աշխատաշուկան այն հիմնական ուղղություններն են, որոնց բարելավման արդյունքում հնարավոր կլինի ապահովել կայուն տնտեսական աճ և աղքատության մակարդակի կրճատում:

Հայաստանի Հանրապետության հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը ընդգրկում է 2014-2025թթ. ժամանակահատվածը ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարական հիմնական փաստաթուղթն է ու մշակվելիք միջնաժամկետ, ոլորտային և այլ ծրագրային փաստաթղթերի հիմքը: Լինելով ՀՀ կառավարության գործունեության առաջնային ուղեցույցը՝ հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը հիմնված է հետևյալ գերակայությունների վրա՝

- զբաղվածության ընդլայնում,
- մարդկային կապիտալի զարգացում,
- սոցիալական պաշտպանության համակարգի բարելավում,
- կառավարման համակարգի ինստիտուցիոնալ արդիականացում:

Ի տարբերություն տնտեսական զարգացման նախորդ փուլերի, երբ տնտեսական աճն ապահովվում էր հիմնականում աշխատանքի արտադրողականության աճի հաշվին, ծրագրվող ժամանակահատվածում իրականացվելիք գործողությունների արդյունքում ակնկալվում է, որ 2014-2025թթ. տնտեսության ոչ գյուղատնտեսական հատվածում տնտեսական աճի յուրաքանչյուր տոկոսային կետի մոտ 4/5-ը կապահովվի աշխատանքի արտադրողականության, իսկ 1/5-ը՝ զբաղվածության ընդլայնման հաշվին: Ընդ որում՝ արդյունաբերության մեջ, որը կլինի զբաղվածության ընդլայնման առանցքային ոլորտներից մեկը, աճին մասնակցության համապատասխան համամասնությունները կկազմեն 3/4 և 1/4: Անդրադառնանք նաև Հայաստանի

սոցիալական ապահովության համակարգին, որը կարևոր դեր է խաղում բնակչությանը՝ սոցիալական աջակցության տրամադրման, ծայրահեղ աղքատության նվազեցման գործում: Սոցիալական աջակցության տրամադրումն այն սակավաթիվ գործիքներից մեկն է, որ կիրառվում է կարճատև և միջին ժամկետներում պաշտպանելու համար հասարակության այն անդամներին, ովքեր չեն շահում տնտեսական զարգացման ընձեռած հնարավորություններից: Դրա հետ մեկտեղ, բարեփոխումները սոցիալական աջակցության քաղաքականության ոլորտում հրամայական են՝ հասնելու համար կայուն արդյունքների ոչ միայն կանխիկ դրամական աջակցություն տրամադրող համակարգի ստեղծման գործում, այլ նաև ներառական սոցիալական աջակցության լայն ծրագրերի կիրառման ասպարեզում: Օրինակ, աշխատաշուկայում մասնակցության խթանումը, հասարակության խոցելի խմբերի հիմնական կարիքները բավարարելուն և աղքատության նվազմանը նպաստելուն զուգընթաց, կնպաստի նաև հասարակության այդ անդամների սոցիալական ինտեգրման գործընթացին: Հայաստանում սոցիալական պաշտպանության քաղաքականության հիմնական նպատակը պետության կողմից սոցիալական ռիսկերի կառավարումը, նվազեցումը և կանխարգելումն են: Պետության կողմից հստակ սահմանված են սոցիալական պաշտպանության համակարգի գործառույթները, որոնց հիման վրա բնակչության խոցելի խմբերին առաջարկվում են համապատասխան ծրագրեր, ներառյալ.

- պետական սոցիալական աջակցության ծրագրերը,
- սոցիալական ապահովության ծրագրերը,
- սոցիալական պաշտպանության ծրագրերը,
- պետական սոցիալական ապահովագրության ծրագրերը,
- զբաղվածության ծրագրերը:

Աղքատության կրճատման հիմնական գործոնները կլինեն տնտեսական աճով պայմանավորված բնակչության աշխատանքային եկամուտների աճը, այդ թվում՝ աղքատ բնակչության աշխատանքային եկամուտների առաջանցիկ աճը, ինչպես նաև սոցիալական ապահովագրությանն ու սոցիալական աջակցությանն ուղղված պետական ծախսերի ու դրանց նպատակայնության աճը:

**Աղյուսակ 4. Աղքատության կրճատման հիմնական նպատակային ցուցանիշները**[32]

| | Փաստ | | | Նպատակային ցուցանիշներ | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **2010** | **2011** | **2012** | **2017** | **2021** | **2025** |
| Աղքատներ, տոկոս՝ բնակչության թվից | 35.8 | 23.7 | 32.4 | 25.7 | 18.1 | 13.0 |
| Ծայրահեղ աղքատներ, տոկոս՝ բնակչության թվից | 3.0 | 2.4 | 2.8 | 2.4 | 2.1 | 1.8 |
| Աղքատության վերին ընդհանուր շեմ/գիծ, դրամ/ամիս | 33.517 | 43.22 | 37.04 | 43.22 | 49.55 | 54.747 |
| Ծայրահեղ/պարենային աղքատության շեմ, դրամ/ամիս | 19.126 | 25.35 | 21.73 | 25.35 | 29.45 | 32.118 |

[32] https://www.gov.am/files/docs/1322.pdf, էջ 115

Ինչ վերաբերում է բնակչության առանձին թիրախային խմբերի աղքատության մակարդակին, ապա ծրագիրը նպատակադրում է աղքատության կրճատում երեխաների, կենսաթոշակառուների և զբաղվածների՝ վարձու աշխատողների ու ինքնազբաղվածների շրջանում: Մասնավորապես՝ աղքատ, այդ թվում՝ զբաղված աղքատ բնակչության աշխատանքային եկամուտների աճն ապահովելու նկատառումով Ծրագիրը նախատեսում է նվազագույն աշխատավարձի շարունակական աճ այն հաշվով, որ աղքատության վերին շեմի նկատմամբ դրա հարաբերակցությունն անընդմեջ աճի: Դրա արդյունքում նվազագույն զուտ աշխատավարձը, որը 2010-2012 թթ. կազմում էր աղքատության վերին շեմի շուրջ 89-90%-ը, 2017 թ-ին կկազմի դրա շուրջ 160%-ը, 2021 թ-ին՝ 190%-ը, իսկ 2025 թ-ին՝ 240%-ը: 369. Կենսաթոշակառուների (ու նրանց ընտանիքների) աղքատության մակարդակի կրճատումն ապահովելու առումով՝ ծրագիրը նախատեսում է աշխատանքային կենսաթոշակների միջին մակարդակի անընդմեջ աճ՝ ինչի հետևանքով վերջինս 2017 թ-ին կկազմի աղքատության վերին շեմի շուրջ 125%-ը, 2021 թ-ին՝ 155%-ը, իսկ 2025 թ-ին՝ շուրջ 200%-ը:[33]

[33] https://www.gov.am/files/docs/1322.pdf, էջ115

# ԳԼՈՒԽ 3. ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

## *3.1. ՀՀ սոցիալական վերափոխումների արդյունավետության բարձրացման ուղիները*

Ինչպես շատ այլ երկրներում՝ Հայաստանի Հանրապետությունում ևս կատարվում են կյանքի որակի գնահատման հետազոտություններ: Այս հետազոտությունների հիմնական նպատակը երկրում հասարակության ընդհանուր բարեկեցությունը գնահատելու նպատակով բաղադրյալ ցուցանիշների մշակումն ու դուրս բերումն է, որը հնարավորություն է տալիս համակողմանի և խորքային տեղեկատվություն ունենալ և հասկանալ հասարակության ապրելակերպի և դրա նկատմամբ այդ նույն հասարակության վերաբերմունքի ու գնահատականի վերաբերյալ:

ՀՀ-ում 2016 թվականին առաջին անգամ կյանքի որակի վերաբերյալ ուսումնասիրություն կատարել է «Այ Փի Էս Սի» քաղաքական և սոցիալական խորհրդատվությունների ինստիտուտը:[34]

Հետազոտության նպատակն է եղել բացահայտել Հայաստանում մշտական բնակվող անհատի կյանքի որակի մակարդակը, մարդկանց բավարարվածությունը իրենց կյանքի որակից և կենսապայմաններից: Այն հիմք է ծառայել կյանքի բազմաբնույթ հարթություններում առկա խնդիրների վեր հանման և դրանց լուծմանն ուղղված հանրային քաղաքականության վերանայման կամ մշակման համար: Կյանքի որակի գնահատումն իրականացվում է երեք մակարդակում՝ բարեկեցության առանցքային բնութագրիչների սինթեզման հիման վրա: Այդ երեք հիմնական մակարդակներն են.

- Մակրոմակարդակ,
- Էզգո-մեզո մակարդակ,
- Միկրոմակարդակ:

[34] https://www.gov.am/u_files/file/documents/3.pdf




**Գծապատկեր 2. Կյանքի որակի հայաստանյան մոդելի սխեմատիկ պատկերը**[35]

***Կյանքի որակի հետազոտության միկրոմակարդակ.*** Կյանքի որակի հետազոտության միկրոմակարդակն առավելապես վերաբերվում է տվյալ անհատի սուբյեկտիվ գնահատականներին ու վերաբերմունքին իր իսկ կյանքի որակի նկատմամբ:

***Կյանքի որակի հետազոտության էզզո-մեզո մակարդակ.*** Կյանքի որակի հետազոտության էզզո-մեզո մակարդակը, ինչպես արդեն նշվել է, բնութագրում է սուբյեկտի կենսամիջավայրը՝ ներառյալ ուղղակի և անուղղակի միջավայրերը: Անուղղակի՝ էզզո միջավայրը սուբյեկտի կենսագործունեության վրա անմիջական ազդեցության արտաքին միջավայրում, այլ կերպ ասած, համայնքում առկա կենսական անհրաժեշտությունների համախմբությունն է, որոնք սպասարկում և/կամ նպաստում են անհատի ֆունկցիոնալության իրացմանը:

***Կյանքի որակի հետազոտության մակրոմակարդակ.*** Կյանքի որակի հետազոտության մակրոմակարդակը ներկայացվում է չորս առանձին ոլորտով, որոնք

[35] https://www.gov.am/u_files/file/documents/IPSC_Q%D6%85LI%207-16_Final%20Report_05_05_2017_Website.pdf

բնութագրում են անհատի և հասարակության կենսապայմանների, կենսագործունեության և կարողությունների իրացման առկա միջավայրի բազմաչափ ընդհանրական պատկերը:

*Մակրոհամակարգի ոլորտների ընտրությունը.* Ոլորտում ընդգրկված ցուցանիշների/գործոնների և կյանքի ոլորտների կարևորության աստիճանը որոշվել է հիմնականում հարցվողի կողմից, հետևաբար այդ գործոններն/ոլորտներն են ներառվել ենթաինդեքսի հաշվարկի մեջ: Հետևապես, որպես տվյալ ոլորտի գնահատական հանդես է գալիս կարևոր համարվող ցուցանիշների միջին անհատի/հարցվողի/ մակարդակով, իսկ որպես ոլորտի ընդհանուր միավոր՝ բոլոր հարցվողների միջինը:

Հետազոտության ընթացքում շեշտը դրվել է Հայաստանում բնակչության կյանքի որակը պայմանավորող առանցքային գործոնների բացահայտման վրա՝ որոնք ազդեցություն ունեն սոցիալ-ժողովրդագրական ու աշխարհագրական տարբեր խմբերի վրա: Այն հիմք է ծառայում հայաստանյան բնակչի կյանքի բազմաբնույթ հարթություններում առկա խնդիրների վերհանման և դրանց լուծմանն ուղղված հանրային քաղաքականության վերանայման կամ մշակման համար: Այս գործոնի միջոցով ուսումնասիրվում է, թե անհատը որքանով է բավարարված ընդհանուր առմամբ Հայաստանում իր կյանքին առնչվող այն ոլորտներից, որոնք, ըստ էությամբ ազդեցություն ունեն նրա կյանքի որակի վրա:

Բնակչության կյանքի որակի յուրաքանչյուր հետազոտություն պետք է կրի դինամիկ բնույթ՝ քանի որ տարեկան կտրվածքով ստացվող արդյունքների համադրման ու համեմատության շնորհիվ հնարավոր է լինում մշակել և իրականացնել հասարակության բարեկեցությանը նպաստող սոցիալական ծրագրեր, կատարելագործել կիրառվող մոտեցումներն ու մեթոդաբանությունը՝ ներառելով նորանոր ոլորտներ ու ցուցանիշներ: Ինչպես նաև հնարավորինս բարձրացնում է որոշում կայացնողների տեղեկացվածության մակարդակը բնակչության տարբեր խմբերի և համերկրյա կյանքի որակի վերաբերյալ:

2019 - 2020թթ (2020թ փետրվարի 1-ի դրությամբ) մեր կողմից նույնպես փորձ է կատարվել որոշակի չափով պարզել Հայաստանի Հանրապետությունում կյանքի որակի

մակարդակը: Հետազոտությունը կատարելիս հիմնվել ենք այնպիսի ցուցանիշների վրա, ինչպիսիք են բնակչության եկամուտները և սուբյեկտիվ բարեկեցությունը:

Կյանքի որակը, չափելու համար հիմնականում կիրառվում են չափորոշիչներ. դրանք են՝

- ✓ առողջությունը
- ✓ ընտանեկան կյանքը
- ✓ հասարակական կյանքը
- ✓ նյութական բարեկեցությունը
- ✓ քաղաքական կայունությունը
- ✓ աշխատանքի հնարավորությունը
- ✓ կլիման և աշխարհաքաղաքական դիրքը
- ✓ անվտանգությունը և ազատությունը

Հարցման հարցաթերթիկները կազմվել են՝ հաշվի առնելով այս հիմնական չափորոշիչները:

Հարցաթերթիկներում ներառել ենք հարցեր, որոնք ընդգրկում են տարբեր ասպեկտներ ու առնչվում են կյանքից բավարարվածությանը և կյանքի որակին՝ սնվելու հաճախականությունը, սննդի մատչելիությունը, առողջությունը, կրթությունը, աշխատանքը, սոցիալական կապիտալը, եկամուտը, հանգստի կազմակերպման հնարավորությունները: Առկա են նաև այնպիսի հարցեր, որոնց միջոցով կարելի է ուղղակիորեն իմանալ, թե որքանով են գոհ իրենց կյանքից և, իհարկե, շրջակա միջավայրի հետ առնչվող հարցերից:

Հետազոտությունը կատարվել է տարիքային բոլոր խմբերի շրջանակներում: Այդ շրջանակը ընտրելիս հաշվի ենք առել այնպիսի գործոններ, ինչպիսիք են սեռը, տարիքը, քաղաքական ակտիվությունը, արժեքային կողմնորոշումները և այլն:

Հարցումը կատարվել է համայնքային և ընտանիք/անձ ենթամակարդակների շրջանակում (հանրապետական մակարդակի ուսումնասիրությունը ավելի մաշտաբային է), ներառել ենք սոցիալական և տնտեսական ոլորտները:

Հետազոտությանը մասնակցել են շուրջ 120 հարցվողներ՝ քաղաքային և գյուղական տարբեր համայնքներից, որոնք համապատասխանում են մատնանշված չափորոշիչներին (սեռ, տարիք և այլն):

Հարցումը պարունակում էր սուբյեկտիվ գնահատման և կյանքի որակի գնահատման բազմաստիճան սանդղակ: Հարցվողներին տրվում էին որոշակի հարցեր, սոցիալական և տնտեսական ոլորտներից, որոնց հիման վրա էլ կատարվել է Հայաստանի Հանրապետությունում կյանքի որակի, կամ սուբյեկտիվ բարեկության մակարդակի չափման հետազոտությունը:

Եվ այսպես, ներկայացնենք այդ հարցերից մի քանիսը ու փորձենք կատարել վերլուծություն և որոշել բնակչության սուբյեկտիվ բարեկեցության և կյանքի որակի մակարդակը: Հարցաթերթիկում ներառված առաջին երկու հարցերը վերաբերում են հարցվողների՝ սննդից և դրա ձեռքբերման հասանելիությունից բավարարվածության աստիճանին: Այն հարցին, թե որքանով են բավարարված իրենց սնվելու հաճախականությունից, կամ սննդի հասանելիությունից, հարցվածների մոտ 60%-ը 1-5 աստիճան սանդղակով պատասխանել է դրական: Այսինքն, նրանք ավելի շատ բավարարված են սննդամթերքի, թե հասանելիությունից, թե թարմությունից, և թե իրենց սնվելու հաճախականությունից: Իսկ մնացած 40%-ը սակավ բավարարված է իր սնվելու պայմաններով:

Եթե վերհիշենք հարցման համար ի սկզբանե մատնանշված չափորոշիչները, ապա կարող ենք ասել, որ այս երկու հարցերի միջոցով պարզվում է հարցվածների՝ իրենց իսկ առողջության նկատմամբ ունեցած վերաբերմունքը: Թարմ սնունդը և դրանից բավարարվածությունն էլ որոշակի չափով ազդեցություն ունեն կյանքի որակի մակարդակի վրա , շատերի համար կարևոր է ավելի շատ սննդի մատչելիությունը, քան թարմությունն ու որակը, ինչը ևս կապում ենք եկամտի ցածր մակարդակի հետ: Հաջորդ հարցերը վերաբերվում էին կրթությանը և զբաղվածությանը: Հարցման արդյունքում պարզեցինք, որ(հարցվողների տարիք 18-35 տարեկան) հարցվողների շրջանակում չկային անգրագետ մարդիկ:

Հարցվողների 50% ուներ բարձրագույն կրթություն, մասնագիտությամբ աշխատում էին 10%, միջին մասնագիտական կրթություն 20% , իրենց

մասնագիտությամբ աշխատում էին 5%, 30% միջնակարգ կրթություն՝ աշխատում են 10%: Բուհական կրթություն չունեցողների մեծամասնությունը կազմում էին գյուղական համայնքների բնակիչները նրանք հիմնականում զբաղվում են գյուղատնտեսությամբ կամ անասնապահությամբ: Հարցվողների 30% ուներ մշտական աշխատանք, գերակշռող մասը քաղաքային համայքի բնակիչներն են, 10% զբաղվում են ձեռնարկատիրությամբ, 20% ուներ ժամանակավոր աշխատանք, իսկ 40% գործազուրկ են, որից 30% գյուղական համանքի իսկ 10% քաղաքային համայնքի բնակիչներն են: Ինչ վերաբերում է աշխատանք գտնելուն, ապա համաձայն հարցվողների 65%-ի՝ իր մասնագիտությամբ աշխատանք գտնելը գրեթե անհնար է: Այսինքն ունենալով բարձրագույն կրթություն՝ երիտասարդները չեն կարող բավարարված զգալ, քանի որ գիտակցում են, որ հետագայում աշխատանք ունենալու հավանականությունը շատ քիչ է:

Առողջության ոլորտը վերլուծելիս պարզեցին, որ հարցվողների մեծ մասը դիմում է բժշկի միմիայն խիստ անհրաժեշտության դեպքում: Ճիշտ է կառավարությունը քայլեր է ձեռնարկում առողջապահական ոլորտը արդիականացնելու և բնակչությանը հասանելի դարձնելու ուղղությամբ, բայց միևնույն է բնակչության որոշ հատվածի հատկապես՝ աղքատ խավի համար դեռ անհասանելի են առողջապահական որոշ ծառայություններ: Անհասանելիության պատճառը ցածր եկամուտներ են :Հայաստանում դեռ չի ձևավորվել յան կուլտուրան, որ մարդիկ տարվա մեջ պրոֆիլակտիկ հետազոտություններ անցնեն:

Հարցաթերթիկում ներառված հարցերից մի քանիսը վերաբերում են անձի ընտանեկան կարգավիճակին և կյանքի պայմաններից բավարարվածությանը: Օրինակ, այն հարցին, թե ինչպիսի ընտանեկան միջավայրում և ինչպիսի բնակարանային պայմաններում են ապրում, հարցվածների մոտ կեսը, այսինքն 50%-ը պատասխանել է, որ ավելի շուտ բավարարված է իր կարգավիճակով՝ թե ընտանեկան, թե կյանքի օբյեկտիվ պայմաններից: Իսկ մնացած կեսը՝ ավելի շուտ կցանկանային առավել լավ ընտանեկան և բնակարանային պայմաններում ապրեին: Վերոնշյալ հարցերի միջոցով էլ բացահայտվել են ընտանեկան կարգավիճակը և նյութական բարեկեցության մակարդակը հարցվածների շրջանակում:

Բնականաբար, հարցվողները իրենց կյանքի որակը առաջին հերթին կապում են եկամուտների մակարդակի հետ: Սակայն հարցումների ընթացքում հարցվողների մեծ մասը խուսափում է նշել իր եկամուտների չափը: Համարվում է, որ նրանք, ովքեր չեն նշում եկամտի չափը, հակված են նվազեցնելու իրենց բարեկեցության, կյանքի որակի մակարդակը, բայց էմպիրիկ տվյալները նման օրինաչափություն չեն հաստատում:

Տարբեր սեռի հարցվողների սուբյեկտիվ գնահատականներն արտացոլում են հասարակության մեջ առկա գենդերային էական տարբերությունները: Իրենց բարեկեցությունը հարուստ և միջին խավից բարձր գնահատողների խմբում գերակշռում են արական սեռի հարցվողները, այն ինչ իրենց միջին և աղքատ խավերին դասողների մեջ գերիշխում են կանայք: Իսկ միջին խավից ցածր, բայց ոչ աղքատ հարցվողների խմբում ավելի շատ են տղամարդիկ:

Ինչպես վկայում են սոցիալ-տնտեսական կարգավիճակի սուբյեկտիվ գնահատականների վրա հիմնված էմպիրիկ տվյալները, մեր հասարակության շերտավորման ձևավորման առումով ազդեցիկ են կրթության և զբաղվածության գործոնները:

Ի տարբերություն վերջիններիս, հասարակության շերտավորման վրա ազդող կարևոր գործոններից են նաև սեռը և տարիքը: Իգական սեռի ներկայացուցիչների սոցիալ-տնտեսական կարգավիճակը հավասարակշռվում է ընտանեկան պատկանելության և ընտանեկան ընդհանրական բյուջեի շնորհիվ, իսկ տարեցների սոցիալ-տնտեսական կարգավիճակի սուբյեկտիվ ցածր գնահատականը մտածելու տեղիք է տալիս: Ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ , որ տարիքն ազդում է սուբյեկտիվ գնահատականների վրա, այսինքն՝ որքան ավելի մեծ տարիքի է հարցվողը, այնքան ավելի մեծ է կյանքի որակի մակարդակը ցածր գնահատելու հավանականությունը: Ինչ վերաբերում է սոցիալական կապիտալին՝ այն կարելի է բարձր գնահատել: Հիմնականում բոլորը բավարարված են ընկերների և ընտանիքի անդամների հետ շփումից և, իհարկե, նրանց կողմից վստահության և աջակցության բարձր մակարդակից: Աջակցության և վստահության ցածր մակարդակ է նկատվում հարևանների և գործընկերների հետ շփման մեջ: Գործընկերների հետ շփման բարելավումը, վստահության և աջակցության սերմանումը մեծապես կախված է տվյալ

կազմակերպության ղեկավարից՝ լինի պետական, թե մասնավոր. դա, առաջին հերթին, բխում է կազմակերպության շահերից: Ընդհանուր առմամբ կյանքից գոհ է հարցված ուսանողների 45%-ը: 55%-ի դեպքում կյանքի պայմաններն իրենց չեն գոհացնում, ինչը կարելի է կապել աշխատանքի, եկամտի հետ, քանի որ նման պատասխաններ ունեցողները կա՛մ չեն աշխատում, կա՛մ ցանկանում են այն փոխել, կա՛մ աշխատում են այլ մասնագիտությամբ: Աշխատողների մեծ մասը վստահ է, որ ՀՀ-ում իրենց մասնագիտությամբ աշխատանք գտնելը բավականին դժվար է: Կան դեպքեր, երբ շատ գոհ են իրենց կյանքից և առկա է սոցիալական կապիտալի բարձր մակարդակ, սակայն չունեն ընտանիքի անդամների հետ ժամանակ անցկացնելու հնարավորություն, ինչն էլ ազդում է երջանկության մակարդակի վրա:

Այսպիսով, հաշվի առնելով բոլոր գործոնները, հանգում ենք այն եզրակացությանը, որ մեր հասարակության կյանքի որակը գտնվում է միջին մակարդակում: Սակայն այս փաստը միանշանակ ընդունել չի կարելի, քանի որ ավելի հստակ եզրակացություն տալու համար հետազոտություններ պետք է կատարվի հանրապետական մակարդակով: Մեր հետազոտության նպատակը հիմնականում այն էր՝ պարզել, թե որքան են բավարարված հարցվածները իրենց կյանքից, որքանով են բավարարված իրենց հնարավորություններից և ուրիշ ինչ գործոններ կարող են ազդել իրենց կյանքի որակի մակարդակի վրա:

Նմանատիպ հետազոտությունները կարևոր և առանցքային ուսումնա-սիրություններ են: Այս ուսումնասիրությունները օգնում են առավել արդյունավետ կարգավորել բնակչության կյանքի որակի՝ սոցիալական և տնտեսական առանձնապես սոցիալական ոլորտում իրականացվող վերափոխումները: Սակայն մինչ այդ վերափոխումներին անդրադառնալը անհրաժեշտ է գիտակցել այն գործողությունների կարևորությունը, որոնք անհրաժեշտաբար պետք է իրագործվեն վերափոխումների ընթացքը սոցիալական տեսանկյունից առավել արդյունավետ և երկրի բնակչությանը սոցիալապես պաշտպանված դարձնելու համար:

Սոցիալական պաշտպանությունը հանդիսացել և շարունակում է մնալ ՀՀ պետական քաղաքականության գերակա ուղղություններից մեկը:[36] Սոցիալական պաշտպանության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակն է երկրում աղքատության մակարդակի էական կրճատումը, ժողովրդագրական իրավիճակի բարելավումն և ՀՀ բնակչության առանձին խմբերի համար սոցիալական երաշխիքների ապահովումը: Վերոհիշյալ նպատակին հասնելու համար սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվում է լայնածավալ պետական միջամտություն:

Ընդհանուր առմամբ սոցիալական վերափոխումների իրագործման ընթացքում անհրաժեշտ է կատարել որոշակի քայլեր. անհրաժեշտ է պարզել, թե բնակչությունն ինչպես կվերաբերվի կառավարության նախաձեռնությանը՝ ուղղված սոցիալական ոլորտի վերափոխումներին և նոր սոցիալական քաղաքականության կարգավորման մեխանիզմների ներդրմանը: Քանի որ մենք ապրում ենք ժողովրդավարական և սոցիալական հանրապետությունում, իսկ Հայաստանի Հանրապետությունն այդպիսինն է՝ ըստ Սահմանադրության , ապա կառավարության կողմից իրականացվող ցանկացած սոցիալական վերափոխում պետք է հետապնդի միայն մեկ նպատակ՝ բնակչության բարեկեցության ապահովում: Մինչ սոցիալական վերափոխումների իրագործումը, պետական մարմինները պետք է ներկայացնեն հանրությանը և, շահառու խմբերին վերափոխման սոցիալական հիմքերը, այսինքն՝ տվյալ վերափոխման արդյունքները որքանով են ձեռնտու և օգտակար նպատակային խմբերի համար: Այդ ամենը պետք է ներկայացվի կոնկրետ, ցուցանիշների միջոցով: Եթե որևէ սոցիալական ոլորտի բարեփոխման նպատակը նրա ֆինանսական և կառավարչական արդյունավետության բարձրացումն է, ապա պետական կառավարման մարմինները պետք է բացատրեն և մանրամասնեն, թե ինչպիսի ակնկալիքներ և օգուտներ են սպասվում տվյալ ոլորտի նպատակային խմբերի համար այդ ոլորտի ֆինանսական առողջացման և կառուցվածքի բարելավման արդյունքում: Ակնկալվող արդյունքները նույնպես պետք է արտացոլվեն կոնկրետ ցուցանիշների միջոցով, չպետք է լինեն ոչ հստակ ձևակերպված: Եվ որ ամենակարևորն է՝ սոցիալական վերափոխման նպատակը չի կարող լինել

[36] 2014-2017 թվականների ՀՀ կառավարության ծրագիրը (ՀՀ կառավարության 19.05.2014 թ. N 511-Ա որոշում)

կառավարչական գործառնությունների հարմարավետության և որակի բարձրացումը՝ առանց հասարակությանը մատուցվող ծառայությունների որակական և քանակական բարելավման: Սոցիալական վերափոխում իրականացնելիս իշխանության մարմինները պետք է տեղեկացնեն հանրությանը վերափոխման արդյունքում առաջ եկող հնարավոր բացասական սոցիալական հետևանքները և ներկայացնեն ծրագիր՝ ուղղված բացասական հետևանքների հաղթահարմանը: Իսկ եթե սոցիալական վերափոխումները չեն հանգեցնում նպատակային խմբերի վիճակի զգալի բարելավմանը, ապա այդպիսի վերափոխումները չպետք է իրագործվեն ընդհանրապես:

Ընդհանրապես պետությունը պետք է որդեգրի այնպիսի ռազմավարական քաղաքականություն, որ հասարակական կյանքի սոցիալ-տնտեսական պայմանների կարգավորումը ու բարելավումը, բնակչության բոլոր խավերի կյանքի որակի բարելավման հեռանկարները հանդիսանան այդ սոցիալական քաղաքականության հիմնաքարը: Սոցիալական բարեփոխումների համակարգը, կամ ծրագիրը պետք է ընդգրկեն հետևյալ կարևոր միջոցառումների փաթեթը՝

1. Բնակչության կենսաթոշակային և կարիքավոր ընտանիքներին աղքատության ընտանեկան նպաստով ապահովումը, ներառյալ միայնակ տարեցների սոցիալական սպասարկումը, հաշմանդամների հասարակական ինտեգրման և վերականգնման հարցերը
2. Ստվերային խոցելի հատվածը, ընտանիքի, կանանց և երեխաների սոցիալական պաշտպանությունն ու պետական աջակցության ցուցաբերման արդյունավետության ապահովումը,
3. Բնակչության զբաղվածության պետական կարգավորման հարցերը,
4. աշխատանքի ու աշխատավարձի հիմնախնդիրները
5. Աշխատատեղերի ստեղծումը և աշխատաշուկայի զարգացումը
6. Աշխատողների իրավունքների պաշտպանությունը և վերահսկողության սահմանումը
7. Ֆինանսական համակարգի զարգացումն ու արդյունավետության բարձրացումը

8. բնակչության աղքատ խավի շրջանում կրթության և աշխատանքի քաջալերումը

9. գործարարությունը խթանող ծրագրերի իրականացումը

Այսինքն տնտեսական քաղաքականությունը պետք է ուղղված լինի ոչ միայն կայուն ու երկարատև տնտեսական աճին, այլ նաև դրա ճիշտ և հավասարաչափ բաշխմանը:

## *3.2. Բնակչության դրամական եկամուտների ավելացման և բաշխման պետական կարգավորումը*

Շուկայական տնտեսություն ունեցող երկրներում գոյություն ունեն բնակչության եկամուտների ավելացման և վերաբաշխման տարբեր համակարգեր: Եկամուտների բաշխման այն համակարգը, որը հաճախ կիրառվում է ըստ դեցիլային կամ քվանտիլային բաշխման ժամանակ, արտացոլում է միայն անվանական եկամուտների բաշխումը: Դրան են վերաբերում բոլոր դրամական վճարումները, որոնք ստանում է բնակչությունը, ներառյալ աշխատավարձը, շահութաբաժինները, ավանդներից ստացվող տոկոսները, բոլոր տեսակի տրանսֆերտային վճարները: Սակայն այդ համակարգը հաշվի չի առնում այն եկամուտները, որոնք չունեն դրամական գնահատականներ այգեգործական տնտեսությունից ստացվող եկամուտները, տնային տնտեսությունում իրականացված աշխատանքների արժեքը, կրթության համար տրվող պետական օգնությունը, բնակվարձի վճարման պետական սուբսիդիաները, բարեգործական հիմնադրամների օգնությունը, մթերքների համար տրված կտրոնների արժեքը և այլն:

Շուկայական տնտեսություն ունեցող երկրների մեծ մասում կառավարությունը ակտիվորեն մասնակցում է բնակչության եկամուտների վերաբաշխման գործին: Հարկային համակարգի պրոգրեսիվ բնույթը նշանակում է, որ բնակչության առավել ապահովված մասը հարկվում է հարկի ավելի բարձր տոկոսային հարաբերությամբ, քան՝ աղքատները: Ըստ որում, ստացված հարկերի մի մասը պետությունը օգտագործում է տրանսֆերտային վճարումների համար բնակչության առավել անապահով խավերի օգտին: Գրեթե բոլոր երկրներում գոյություն ունեն սոցիալական ապահովագրության և

աղքատների պետական օգնության ծրագրեր: Սոցիալական ապահովագրությունը նախատեսում է ծերության, անաշխատունակության, կերակրողին կամ աշխատանքը կորցնելու գործազրկության նպաստ ապահովագրություն: Պետական օգնության ծրագրերը իրենց մեջ ներառում են մի շարք լրացուցիչ միջոցառումներ սոցիալական և բժշկական ապահովագրությունը, շատ երեխաներ ունեցող ընտանիքներին օգնությունը, պարենի հատկացումը և տարբեր արտոնությունների այդ թվում բնակվարձի, կրթության, բժշկական սպասարկման վճարման կիրառումը:

Սոցիալական աջակցության դերը աղքատության նվազեցման և անհավասարության կրճատման տեսանկյունից անհերքելի է և տարիներ շարունակ, համարվել է աղքատության դեմ պայքարի կարևորագույն և անկյունաքարային գործիքը Համաշխարհային բանկի հետազոտողների կողմից՝ նախքան տարբեր երկրներում ակտիվ զբաղվածության քաղաքականության ներդրումն ու խթանումը:[37] Ըստ Համաշխարհային բանկի զեկույցի՝ սոցիալական աջակցությունը և գործազրկության նպաստը տնտեսության վրա կարող են ազդել 3 մակարդակներում՝ ազգային, համայնքի և տնային տնտեսությունների: Ազգային մակարդակում սոցիալական աջակցությունն ու գործազրկության նպաստը դրական ազդեցություն են ունենում սոցիալական համերաշխությանը, բռնությունների նվազեցմանը, կապիտալի շուկայի զարգացմանը և արդյունավետ պահանջարկի խթանմանը: Համայնքային մակարդակում սոցիալական աջակցությունը և գործազրկության նպաստը նպաստում սպառման աճին, որն էլ իր հերթին հանգեցնում է ներդրումների ավելացմանը: Իսկ տնային տնտեսության մակարդակում սոցիալական աջակցությունը և գործազրկության նպաստը կանխարգելում են տնային տնտեսության ունեցվածքի (բնակարան, ավտոմեքենա և այլն) վաճառքը և նպաստում են մարդկային կապիտալի զարգացմանը: Բայց պետք է նշել, որ Գործազրկության նպաստները, բացի դրական ազդեցություններից, կարող են շահառուների մոտ ստեղծել խնամակալական տրամադրություններ և չաշխատելու խթաններ:

[37] World development report 2006, Equity and development, Vol. 28, World Bank Publications, 2005

Մշակելով աղքատության հաղթահարման ծրագիր, կառավարությունը մշակել և իրականացնում է տնտեսական զարգացման հեռանկարային ծրագիրը, որը տնտեսության զարգացման միջոցառումների համակարգ է: Քաղաքացիների կենսամակարդակը և սոցիալական վիճակը բարելավելու, սոցիալական իրավունքները լիարժեք և արդյունավետ իրականացնելու համար Կառավարության քաղաքականությունը պետք է հիմնված լինի հավասար հնարավորությունների և աշխատանքի քաջալերման սկզբունքի վրա: Աղքատության հաղթահարման առաջնային գործիքն աշխատանքն է, աշխատանքի համար իրական հնարավորությունների ստեղծումը: Այս նպատակի իրագործման համար առանցքային նշանակություն կունենա բնակչության աղքատ խավի շրջանում կրթության և աշխատանքի քաջալերումը, գործարարությունը խթանող ծրագրերի իրականացումը:

Համաշխարհային բանկի փորձագետների պնդմամբ, սոցիալական աջակցության ծրագրերը պետք է իրականացվեն հավասարության, հարկաբյուջետային կայունության, արդյունավետության, և ռիսկերին արագ և պատշաճ արձագանքելու սկզբունքների վրա: Այսինքն միևնույն սոցիալական կարգավիճակում գտնվող շահառուները պետք է ստանան հավասարաչափ օժանդակություն, ոչ մի կարիքավոր անձ չպետք է դուրս մնա սոցիալական աջակցության ծրագրերից: Սոցիալական ծրագրերը պետք է նպաստեն մարդկային կապիտալի զարգացմանը, խթանեն զբաղվածությունը և նպաստեն ֆինանսական շուկաների զարգացմանը և ապահովեն արդյունավետություն:

Այժմ փորձենք նշել այն հիմնական գործոները, որոնք կիրառական են Հայաստանի Հանրապետությունում աղքատության հաղթահարման գործընթացում և հանդիսանում են մարդկային կապիտալի զարգացման խթան: Առանձնացնենք մի քանիսը՝ գործազրկության նպաստ, սոցիալական նպաստ, ներդրումներ, աշխատույժի զբաղվածություն, եկամուտների վերաբախշում և այլն :

***Սոցիալական նպասպ:*** ՀՀ-ում սոցիալական նպաստների տրամադրումը իրականացվում է «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով:[38] Պետական

[38] «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2013.12., Հոդված 5

նպաստների տեսակներն են, ընտանեկան և սոցիալական նպաստները, հրատապ օգնությունը, երեխայի ծննդյան միանվագ նպաստը, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստը, ժամանակավոր անաշխատունակության ու ծերության նպաստները, հաշմանդամության նպաստը, կերակրողին կորցնելու թաղման դեպքում նպաստները: Բացի այդ, ըստ ՀՀ կառավարության 2017թ. հունվարի 14-ի N 5-Ն սոցիալական վիճակը ծանրացնող յուրաքանչյուր գործոն ավելացնում է ընտանեկան նպաստի կամ կենսաթոշակի չափը:[39] Պետք է նշել, որ սոցիալական աջակցության տրամադրման համակարգը չի բավարարում խթանման սկզբունքին,այսինքն չի նպաստում զբաղվածության խթանմանը և մարդկային կապիտալի աճին: Որպեսզի խթանենք զբաղվածությունը և ապահովենք մարդկային կապիտալի աճը անհրաժեշտ է մշակել ռազմավարական ծրագիր և նպաստառու ընտանիքների աշխատունակ անդամներին (սահմանել ժամկետ) ներգրավվել հանրային աշխատանքներում: Այդպիսի ինստիտուտի ներդրումը ոչ միայն կնպաստի տնտեսական աճի ավելացմանը, այլև կավելացնի շահառուների, աշխատանքի տեղավորման ձգտումը(նման փորձ 2006-2007 թվականին իրականացվել է Հնդկաստանում) :

***Աշխապուժի զբաղվածություն:*** Աշխատուժի զբաղվածության ռազմավարական խնդիրները պետք է դառնան տնտեսապես ակտիվ բնակչության զբաղվածության, աշխատանքային հարաբերությունների իրավական կարգավորումը: Մշակելով զբաղվածության քաղաքականության ծրագիր, կարևորվում է նոր աշխատատեղերի ստեղծումը, աշխատուժի վերամասնագիտացումը, որակավորման բարձրացումը: Կարևոր նշանակություն են ստանում այնպիսի միջոցառումների ծրագրերի մշակումը, ինչպիսիք են փոքր և միջին ձեռնարկատիրության խրախուսումը, գործազուրկներին ֆինանսական աջակցությունը, սեփական գործ սկսելու նպատակով, երիտասարդներին աշխատանքի շուկա ներգրավելը, ուսումնական կենտրոնների հիմնումը, գործազուրկների վերամասնագիտացման և որակավորման բարձրացման համար:

[39] ՀՀ կառավարության N 5-Ն որոշում. 2016թ. Ընտանեկան նպաստի, Սոցիալական նպաստի, Հրատապ օգնության եւ մինչեւ երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի չափերը սահմանելու մասին, ՀՀՊՏ 2016.01.20/4(1184) Հոդվ. 36

ՀՀ-ում աշխատանքային ոլորտում տեղի են ունենում բազմաթիվ իրավախախտումներ, չնայած այն փաստի, որ աշխատանքային օրենսգիրքը ենթարկվել է մեծածավալ փոխությունների, միևնույն է լիաժեք չի կիրառվում:

Օրինակ՝

1. Աշխատավարձի չվճարումը երկարատև՝ 6 և ավելի ամիսների ժամանակահատվածում (հիմնականում՝ գիշերային աշխատաժամերի)

2. Աշխատավարձի վճարման պարբերական, շարունակական ուշացումները

3. Արձակուրդայինների և օրապահիկների չվճարումը

4. Աշխատանքային պայմանագրում փաստացի աշխատավարձից ցածր աշխատավարձի գրանցումը:

5. Չի պահպանվում աշխատանքի առավելագույն տևողության սահմանափակման վերաբերյալ պահանջը:

6. Ամենամյա արձակուրդի տրամադրման կարգի խախտում: Օրենսգրքով նախատեսված չէ ամենամյա իրավունքի խախտման դեպքում գործատուի կողմից աշխատողին տուգանքի վճարման պահանջը, որը կարող է գործնականում դառնալ ամենամյա արձակուրդը ժամանակին չտրամադրելու տարածված խնդիրը կանխարգելու և աշխատողի ամենամյա հանգստի հիմնարար իրավունքի իրացման գործուն միջոց: Օրենսգրքում անհրաժեշտ է նախատեսել դրույթ, ըստ որի՝ ամենամյա արձակուրդի իրավունքը չիրացնելու դեպքում գործատուն պարտավորվի աշխատողին վճարել սահմանված չափով տուժանք՝ կետանցած յուրաքանչյուր օրվա համար:

Պետք է քայլեր ձեռնարկել աշխատանքային ոլորտ օրենսդրորեն կարգավորելու ուղղությամբ: Այդ կարգավորումները կբերեն աշխատողների և գործատուների իրավունքների և պարտականությունների, օրինական և արժանապատիվ աշխատանքի համար անհրաժեշտ նվազագույն պայմանների ապահովմանը:

***Ներդրումներ և գործարար միջավայր***: Աղքատության մակարդակի կրճատման առումով պետք է կատարելագործել ներդրումային քաղաքականությունը և գործարար միջավայրը: բարելավումը ինչպես ուղղակիորեն, այնպես էլ անուղղակիորեն կնպաստեն բնակչության կենսամակարդակի վրա, ինչը իր հերթին, կհանգեցնի աղքատության մակարդակի կրճատմանը: Հետևաբար, զարգացման ներկա փուլում բնակչության

կենսամակարդակի բարձրացման կարևոր տնտեսական մեխանիզմներից մեկը երկրի արտադրության ազգային համակարգի գործունակությունն ու մրցունակության պահպանումն է՝ կենտրոնանալով հայրենի սպառողի շահերի վրա: Այստեղ, նախևառաջ, անհրաժեշտ է կենտրոնանալ երկրի սննդի և թեթև արդյունաբերության ոլորտում խոշոր ներդրումային ծրագրերի իրականացման վրա, սպառողական ապրանքների արտադրության ապահովման և դրանցում բնակչության կարիքների բավարարման վրա: Այսինքն տնտեսական մրցակցության զարգացումը կնպաստի բնական մենաշնորհների կողմից մատուցվող և մյուս ապրանքների ու ծառայությունների մատչելիության մակարդակի պահպանմանը, տնտեսավարող սուբյեկտների ավելացմանը, զբաղվածության ընդլայմանը, ինչպես նաև տնտեսական գործունեության համար նպաստավոր պայմանների ստեղծմանը, եկամուտների և վերաբաշխման ենթակա գումարների ավելացմանը, շուկայում գների ճկունության ապահովմանը, եկամուտների բևեռացման խնդրի մասնակի լուծմանը: Այս ամենը կանդրադառնա բնակչության կենսամակարդակի վրա և կկրճատի աղքատության մակարդակը:

***Գործազրկության նպաստ:*** ՀՀ-ում գործազրկության վճարների վերաբերյալ պրակտիկան վերացավ 2014թ. «Զբաղվածության մասին» օրենքի ընդունմամբ: Այն փոխարինեց 2005թ. ընդունված «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքին, որով էլ կարգավորվում էր գործազրկության վճարման կարգը: ՀՀ-ում վճարվող գործազրկության վճարը կազմում էր 18000 դրամ, որը ավելի փոքր է, քան նվազագույն սպառողական զամբյուղի մեծությունը: Առաջարկում ենք վերականգնել գործազրկության նպաստը և կիրառվի միայն կենսաթոշակային տարիքի չհասած այն քաղաքացիների շրջանակում, ովքեր վերջին երեք տարիների ընթացքում շարունակաբար վճարել են եկամտային հարկ: Գործազրկության նպաստը պետք է առնվազն հավասար լինի նվազագույն սպառողական զամբյուղի մեծությանը: Գործազրկության նպաստի վերականգնումը, , թույլ կտա աշխատանքը կորցրած անձանց խուսափել սպառման շոկից և աղքատությունից, կնպաստի պետություն-քաղաքացի կապի ամրապնդմանը և սոցիալական պարտավորությունների ամբողջ ծավալով իրականացմանը: Ուսումնասիրելով տարբեր երկրների հաջողված փորձը, առաջարկում ենք նաև ներդնել

գործազրկության կամավոր ապահովագրության ինստիտուտը, որը ոչ միայն չի ավելացնի ՀՀ պետական բյուջեի սոցիալական ծախսերը, այլև կնպաստի ՀՀ-ում կապիտալի շուկայի զարգացմանը:

***Տնտեսական քաղաքականության արդիականացում***: Ազգային տնտեսության արդիականացումը ներառում է ոչ միայն անցում դեպի նոր նորարարական տեխնոլոգիաներ, այլև սոցիալական զարգացման պարադիգմի փոփոխություն: Հնարավոր է տնտեսական արդիականացման երկու հիմնական ուղղություն.

1. Պետական հաստատությունների, մասնավորապես, սոցիալական ենթակառուցվածքների ոլորտների գործունեության արդիականացում:

2. Տեխնիկական և տնտեսական արդիականացում, որն ուղղված է արտադրության նյութատեխնիկական բազայի թարմացմանը.

Հայաստանի տնտեսության մեջ շուկայական հարաբերությունների ձևավորման և խորացման ընթացքում բնակչության բարեկեցության բարելավումը հնարավոր է արդիականացման ուղղություններ իրականացնելով, քանի որ հաջողության բանալին է բոլոր ոլորտների և ոլորտների արդիականացման լայնորեն զարգացած ձևը ՝ հիմնված համակարգային և ինտեգրված մոտեցման վրա : Ժամանակակից պայմաններում շուկայական ինստիտուցիոնալ վերափոխումները շատ էական ազդեցություն են ունենում բնակչության կենսամակարդակի և Հայաստանի Հանրապետությունում մարդկային կապիտալի զարգացման վրա:

Առանձնահատուկ նշանակություն ունեն ինստիտուցիոնալ միջոցառումները, որոնք նպաստում են աշխատունակ բնակչության շրջանում տնտեսական և նորարարական գիտելիքների խորացմանը, քանի որ անկանխատեսելի շուկայական իրավիճակներում միայն պատրաստված և ակտիվ գործող ռեսուրսները կարող են հասնել ակնկալվող արդյունքների: Նորարար գիտելիքներին զուգահեռ, հիմնական սոցիալ-տնտեսական գիտելիքները պետք է դառնան պետական կրթության քաղաքականության կարևոր մաս և ողջ հասարակության ուշադրության առարկա, քանի որ բարձր որակավորում ունեցող մասնագետներ են, ովքեր խաղում են կարևորագույն մեկնարկային մեխանիզմի դերը՝ առավել օպտիմալ տնտեսական համակարգի կառուցման գործում: Այս տեսանկյունից հրատապ խնդիրներից է տնտեսական և

սոցիալական մշակույթի հիմքերի ձևավորումը, որոնք համապատասխանում են շուկայական հարաբերությունների քաղաքակիրթ ձևերին, որոնք որոշում են բնակչության բարձր կենսամակարդակը:

Հմուտ աշխատուժը համաշխարհային շուկայում ազգային տնտեսության ամենակարևոր մրցակցային առավելությունն է: Այս մեխանիզմը որոշվում է բնակչության կյանքի մակարդակով և որակով, ինչը հիմնական պայմանն է կրթության մեջ ներդրումներ կատարելու համար: Շուկայական հարաբերությունների գերիշխանության ընթացքում կրթության տեսակների շարքում գերակա դեր է խաղում տնտեսական կրթությունը, քանի որ այն համարվում է աշխատունակ բնակչության կենսամակարդակի բարձրացման մեխանիզմներից մեկը: Տնտեսական կրթությունը ոչ միայն նպաստում է տեղեկատվության ընդլայնմանը տնտեսագիտության ոլորտում, այլև նպաստում է ռացիոնալ մտածողության և գրագիտության ձևավորմանը բոլոր տեսակի ռեսուրսների արդյունավետ օգտագործման մեջ ՝ դրանով իսկ ազդելով աշխատուժի որակի և ժամանակակից սոցիալ-տնտեսական պայմաններին հարմարվելու կարողության վրա, իր հերթին ավելացնելով ստեղծարարությունը:

***Եկամուտների վերաբաշխում:*** ՀՀ բնակչության կենսամակարդակը բնութագրող ցուցանիշներից, ելնելով պետք է մշակել նաև տնտեսական քաղաքականության այնպիսի ծրագիր, որն ուղղված կլինի եկամուտների բաշխման անհավասարության կրճատմանը: Ներկայումս գոյություն ունի բնակչության խավերի միջև ծայրաստիճան բևեռացում, եկամուտների խիստ անհավասար բաշխում և աղքատության մակարդակի բարձրացում: Դա պահանջում է պետության ակտիվ սոցիալական քաղաքականության իրականացում՝ ուղղված բնակչության աղքատացման ռիսկի նվազեցմանն ու աղքատ բնակչության հնարավորությունների ընդլայնմանը, ինչպես նաև եկամուտների բաշխման անհավասարության մեղմմանը: Այս խնդիրների լուծումը հնարավորություն կտա ոչ միայն աղքատ խավի կենսամակարդակի բարձրացմանը, այլև միջին խավի ձևավորմանը, քանի որ հենց միջին խավն է տնտեսության զարգացման հիմքը ու դրա հիմքերի ամրապնդումը: Իսկ մեզանում միջին խավ ձևավորելու համար անհրաժեշտ է բարձրացնել բնակչության եկամուտները, որի համար պետությունը պետք է որդեգրի

նվազագույն աշխատավարձի, կենսաթոշակների, նպաստների և այլ նվազագույն սոցիալական երաշխիքների մակարդակի բարձրացման կուրս:

**Սոցիալական պաշտպանություն**




**Գծապատկեր 3. ՀՀ սոցիալական պաշտպանության համակարգ**[40]

Վերջին ժամանակներում ՀՀ կառավարության պետական ծախսերի ոլորտում իրականացվող քաղաքականության շրջանակներում սոցիալական պաշտպանությունը դիտվել է որպես գերակայություն: Սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության նպատակն է բնակչության հնարավորությունները ընդլայնել՝ որոշակի ռիսկերի դիմակայելու կամ որոշակի կարիքների բավարարելու համար: Այն իրականացվում է սոցիալական աջակցության, սոցիալական ապահովության և ապահովագրության կոնկրետ և նպատակաուղղված քաղաքականությունների միջոցով, որոնք նպատակ ունեն նվազեցնել աղքատությունը, նվազեցնել անհավասարությունը, ապահովել ծեր տարիքը, ընդլայնել բնակչության խոցելի խմբերի հնարավորությունները և ապահովել նրանց որոշակի սոցիալական երաշխիքներով, ինչպես նաև բարելավել ժողովրդագրական իրավիճակը: Ըստ այդմ էլ, նկատվել է ՀՀ պետական բյուջեից

[40] Ղանթարչյան Լ., Սոցիալապես անապահով խավերի կենսամակարդակի բարձրացման պետական կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում, Եր., 2017, էջ 15

սոցիալական պաշտպանության ոլորտին ուղղվող ընդհանուր ծախսերի մակարդակի կայուն աճի միտում:

ՀՀ սոցիալական պաշտպանության ոլորտում, ընդհանուր առմամբ, իրականացվում է 80-ից ավել ծրագիր, խթանվում է սոցիալական աշխատողի ինստիտուտի կայացումը, շարունակվում են կենսաթոշակային բարեփոխումներն ու ներդրված կուտակային համակարգի կատարելագործումը:

**Աղյուսակ 5. Պետության կողմից իրականացվող սոցիալական ծրագրեր**

| | |
|---|---|
| 1. | Զբաղվածության ծրագիր |
| 2. | Խնամքի կարիք ունեցող 18 տարեկանից բարձր տարիքի անձանց խնամքի ծրագիր |
| 3. | Անապահով սոցիալական խմբերի աջակցություն |
| 4. | Սոցիալական փաթեթների ապահովում |
| 5. | Միայնակ տարեցների և հաշմանդամների տնային խնամքի սոցիալական սպասարկում |
| 6. | Սոցիալական ծառայություն անաշխատունակության դեպքում |
| 7. | Բնակարանային ապահովում |
| 9. | Կենսաթոշակային ապահովում |
| 10. | Ընտանիքներին՝ կանանց և երեխաներին աջակցություն |
| 11. | Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցություն |
| 12. | Ավանդների փոխհատուցում |

Պետության կողմից վերոգրյալ ծրագրային քաղաքականության հիմնական նպատակն է՝ երկրում աղքատության մակարդակի էական կրճատումը, ժողովրդագրական իրավիճակի բարելավումն և ՀՀ բնակչության առանձին խմբերի համար սոցիալական երաշխիքների ապա հովումը: Վերոհիշյալ նպատակին հասնելու համար սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվում է լայնածավալ միջոցառումներ:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հասարակության սոցիալական վիճակը բնութագրող կարևորագույն սոցիալական կատեգորիան բնակչության կյանքի որակն է: Հայաստանում սոցիալ-տնտեսական բարեփոխումները հանգեցրել են կտրուկ փոփոխությունների հասարակության բոլոր ոլորտներում: Պետությունն ու մարդիկ բախվեցին ժամանակակից ժողովրդավարական հասարակություն կառուցելու գլոբալ խնդրին, որում մարդու համար կարևոր են ոչ միայն նյութական ապրանքների սպառման որոշակի մակարդակը, այլև կրթության հասանելիությունը, մարդու առողջության պահպանումը, աշխատատեղերի բավարարումը, շրջակա միջավայրը, անվտանգությունը և շատ այլ գործոններ: Մեր ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այս խնդրի լուծմանն ուղղված քայլեր կատարելը, կյանքի որակը, դրա բարելավումը պետք է հանդիսանան հիմնական նպատակը և սոցիալ-տնտեսական զարգացման պլանավորման հիմնական պայմաններից մեկը, ինչպես համապետական, այնպես էլ տարածաշրջանային մակարդակով:

Հայաստանում կյանքի որակի գնահատումն իրականացվում է երեք մակարդակում բարեկեցության առանցքային բնութագրիչների սինթեզման արդյունքում:

Կարևոր է ընդգծել, որ ոլորտների և ցուցանիշների ընտրության համար հիմք են հանդիսացել կյանքի որակի վերաբերյալ առկա տեսական-գիտական ու էմպիրիկ-գործնական հետազոտությունների և առանձին երկրների ու միջազգային հեղինակավոր կազմակերպությունների կողմից իրականացված նմանատիպ ուսումնասիրությունների արդյունքներն ու փորձը՝ միևնույն ժամանակ հիմքում դնելով առանձին ոլորտների և ցուցանիշների կիրառելիությունը և համարժեքությունը, ինչպես նաև կատարելով սեփական ուսումնասիրությունն ու հարցումը հնարավոր է դառնում ներկայացնել հետևյալ եզրակացությունները.

Կյանքի դրսևորման հիմնական չափորոշիչը մարդու կամ հասարակության կեցությունն է, որով էլ հենց պայմանավորված է մարդու զբաղեցրած տեղն ու դիրքը մերօրյա խիստ բազմաշերտ հասարակության ներսում: Եթե հասարակության գլխավոր

մասնիկ հանդիսացողը՝ մարդը զուրկ է կեցության անգամ տարրական պայմաններից ապա առաջ են գալիս բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնցից գլխավորը թերևս հասարակության բազմաշերտացումն է:

Այսինքն՝ եթե ուզում ենք պատկերացում ունենալ մարդկանց կյանքի որակի աստիճան վերաբերյալ, առաջին հերթին պետք է չափենք նրանց բարեկեցության աստիճանը, Իսկ կյանքի որակի մակարդակը չափելիս պետք է հաշվի առնենք մարդու առողջությունը, հասարակական կյանքը ընտանեկան կյանքը, նյութական ապահովվածությունը, Աշխատանք ունենալու գրավականները , անվտանգությունը, ազատությունը շրջակա միջավայրը և այլն: Այս բոլոր գործոններն անխտիր փոխկապակցված են միմյանց հետ և սրանցից կամայական մեկի բացասական ցուցանիշն անպայման անդրադառնում է մարդու կյանքից բավարարվածության զգացման վրա:

Առկա ցուցանիշների դինամիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ գիտության, կրթության, մշակույթի, բժշկության առանցքային ոլորտների զգալի թուլացումը, զանգվածային աղքատության առկայությունը, սոցիալական երաշխիքների կտրուկ անկումը, բնակչության տեղահանումը և վերարտադրողական առողջության հետ կապված խնդիրները, բնակչության բարոյական առողջության վատթարացումը, սոցիալական արժեքների ճգնաժամը և բարքերի անկումը: բոլորը, ներառյալ կառավարությունը, ճանաչվել են որպես առավել սուր խնդիրներ: Բացի օբյեկտիվ ցուցանիշներից, շատ բան կախված է կյանքի որակի սուբյեկտիվ գնահատականից և անհատի և հասարակության, որպես ամբողջություն, և այժմ այս գնահատումն մեր երկրում ավելի քան անբավարար է:

Հաշվի առնելով հետազոտության արդյունքները հնարավոր է դառնում ներկայացնել հետևյալ առաջարկությունները.

Բնակչության կենսամակարդակը բարելավելու համար պետությունը պետք է ազդի տնտեսության առկա արտադրական կառուցվածքների վրա՝ օպտիմալ կառուցվածքային տնտեսական քաղաքականության միջոցով: Անհրաժեշտ է առաջնահերթություն տալ ներքին ներդրումների ներգրավմանը, ինչը նյութական հիմք կստեղծի բնակչության բարեկեցության բարելավման համար ՝ ավելացնելով զբաղվածությունը:

Հայաստանի զարգացման ներկա փուլում բնակչության կենսամակարդակի բարելավմանը նպաստող հիմնական տնտեսական մեխանիզմները կարող են լինել.

- բարենպաստ գործարար միջավայրի կամ ներդրումային միջավայրի ստեղծում.
- խթանող հարկային և դրամավարկային քաղաքականության մշակում և իրականացում. երկարաժամկետ հեռանկարում բարձր եկամուտ ապահովող արդյունաբերություններում պետական ներդրումների ընդլայնում:
- նորարարական տեխնոլոգիաների արագացված զարգացումը արտադրական արդյունաբերությունների զարգացման մեջ ՝ տնտեսությունը արդիականացնելու և համաշխարհային տնտեսություն մուտք գործելու նախադրյալ ստեղծելու համար:
- Վերարտադրողական ինստիտուտներից անցում կատարել արտադրողական ինստիտուտների
- Վարել կադրային ճիշտ քաղաքականությունը
- Պետության կողմից տարեցների խնամքի ծառայությունները ոչ պետական կազմակերպություններին մրցակցային սկզբունքով պատվիրակման համար անհրաժեշտ հիմքերի և մեխանիզմների ստեղծում
- նպաստների և փոխհատուցման համակարգի արդիականացում, որն ուղղված է ցածր եկամուտ ունեցող բնակչության պահպանմանը.
- Տարեց մարդկանց համայնքային կյանքին և որոշումների կայացմանը մասնակցության և սոցիալական ներառման ապահովումը
- Հայաստանում աղքատության հաղթահարման համար որպես լրացուցիչ միջոցների աղբյուր օգտագործել սոցիալական ապահովագրության համակարգի ավելցուկային միջոցները:
- Աղքատության ընտանեկան նպաստների հասցեականության բարձրացում հզոր տեղեկատվական բազայի ստեղծման միջոցով, որի համար հիմք կարող է ծառայել սոցիալական քարտերի համակարգը:

Ընդհանուր առմամբ, կազմակերպական և տնտեսական մեխանիզմների մի շարք գործոններ՝ ուղղված սոցիալական ոլորտի բարելավմանը, օգնում է հարթել շուկայի տատանումները և վերացնել շուկայական հարաբերությունների զարգացման թերությունները:

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


**Իրավական ակտեր**

1. ՀՀ սահմանադրություն

**2.** «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք

3. «Զբաղվածության մասին» օրենք

4. ՀՀ աշխատանքային օրենսգիրք

5. «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենք

**6.** ՀՀ կառավարության N 5-Ն որոշում. 2016թ. Ընտանեկան նպաստի, Սոցիալական նպաստի, Հրատապ օգնության և մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի չափերը սահմանելու մասին

**Գրականություն**

7. Ղանթարչյան Լ., Սոցիալապես անապահով խավերի կենսամակարդակի բարձրացման պետական կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում, Եր., 2017

8. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2004 թվականի հունվար-դեկտեմբերին, տեղեկատվական ամսական զեկույց, ՀՀ ԱՎԾ, 2005, էջ 217:

9. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2019,

10. Гурьев, В. И. Основы социальной статистики. Методы. Системы показателей. Анализ – М. 1991г.

11. Иванов В.Н., Суворов А.В. Неравенство и бедность населения: опыт решения проблемы в России и за рубежом // Проблемы прогнозирования. – 2006. – № 3.

12. Ишмуратова В. Г Содержание категории «бедность» в новейшей истории России, «Проблемы современной экономики», Санкт-Петербург, 2010г

13. Пигу А., Экономическая теория благосостояния, М., 1985

14. Содействие развитию предпринимательства: Бизнес, работающий на ведных. Отчет для генерального секретаря Обьединенных Нации, UNDP, New York, 2004

15. Философский энциклопедический словарь. М., 1989

16. Smith, Adam, [1776] 1976, vol. 2, bk. 5, ch. 2

17. Sc2halock, R. L. (ed) (1996) Quality of Life: Volume I: Conceptualization and Measurement. Washington: AAMR

18. World Development Indicators 2018, The World Bank, pp. 92.

19. World Development Indicators, 2010, The World Bank,

20. World Development Indicators, The World Bank

**Համացանցային կայքեր**

21. www.mss.am/arm/volort/socaphimn.htm (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական ինտերնետային կայք):

22. www .ceoworld.biz/2019/04/11/best-quality-of-life-2019/

23. www.un.am/hy/agency/UNDP

24. www.internations.org/expat-insider/2019/quality-of-life-index-39831

25. www.un.am/hy/agency/UNDP

26. www.numbeo.com/quality-of-life/country_result.jsp?country=Armenia

27. www.internations.org/expat-insider/2019/quality-of-life-index

28. www.gov.am/u_files/file/documents/IPSC_Q%D6%85LI%207

29. 16_Final%20Report_05_05_2017_Website.pdf

30. www.armstat.am/file/doc/99517138.pdf

31. www.gov.am/files/docs/1322.pdf, էջ

32. www.gov.am/u_files/file/documents/3.pdf

33. www.gov.am/u_files/file/documents/IPSC_Q%D6%85LI%20716_Final%20Report_05_05_2017_Website.pdf

## Հավելված

### ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ

**Հարց 1. Ի՞նչ հաճախականությամբ եք Դուք/ Ձեր ընտանիքը օգտագործում հետևյալ ապրանքատեսակները մեկ ամսվա ընթացքում.**

1. ամեն օր,
2. շաբաթական մի քանի անգամ,
3. շաբաթը մեկ,
4. երկու շաբաթը մեկ,
5. երեք շաբաթը մեկ,
6. ամիսը մեկ,
7. անկանոն,
8. չենք օգտագործում:

| N | Ապրանքատեսակ |
|---|---|
| 1 | Հաց, հացամթերք |
| 2 | Միս |
| 3 | Թռչնամիս |
| 4 | Մսամթերք |
| 5 | Ձկնեղեն/ծովամթերք |
| 6 | Մ իրգ, բանջարեղեն |
| 7 | Կաթնամթերք |
| 8 | Ձու |
| 9 | Հրուշակեղեն, քաղցրավենիք |
| 10 | Մակարոնեղեն/հատիկավոր |
| 11 | Ընդեղեն (չարազ) |
| 12 | Շոկոլադ |
| 13 | Ծխախոտ |
| 14 | Թեյ, սուրճ |

| | |
|---|---|
| **14** | Ալկոհոլային խմիչքներ |
| **15** | Ոչ-ալկոհոլային խմիչքներ |
| **16** | Տնտեսական ապրանքներ |
| **17** | Հիգիենայի, կոսմետիկ պարագաներ |

**Հարց 2. Որքանո՞վ է Ձեզ գոհացնում Ձեր կողմից սպառվող/օգտագործվող ապրանքատեսակների որակը**

1. բոլորովին չի գոհացնում,
2. ավելի շատ չի գոհացնում,
3. ավելի շատ գոհացնում է,
4. լիովին գոհացնում է

**Հարց 3. Նշե՛ք, խնդրեմ, թե ինչ կրթություն և մասնագիտություն (որակավորում) ունեք:**

______________________________________________________

**Հարց 4. Աշխատու՞մ եք:**

1. Այո՛
2. Ո՛չ

**Հարց 5. Հե՞շտ է արդյոք մասնագիտությամբ աշխատանք գտնել Ձեր համայնքում:**

**Հարց 6. Հե՞շտ է աշխատանք գտնել Ձեր համայնքում:**

| | Աշխատել | Հնարավոր չէ | Հնարավոր է |
|---|---|---|---|
| Հարց 5 | Մասնագիտությամբ | | |
| Հարց 6 | Ընդհանուր առմամբ | | |

**Հարց 7. Հաճախու՞մ եք Դուք/Ձեր ընտանիքի անդամները որևէ ուսումնական հաստատություն:**

1. Այո՛

2. Ո՛չ

**Հարց 8. Դուք /Ձեր ընտանիքի անդամները որքա՞ն հաճախ եք դիմում բժշկական հաստատություններին:**

---

**Հարց 9.Եթե դեղորայք և/կամ այլ բժշկական պարագաներ ձեռք բերելու անհրաժեշտություն է առաջանում, որտեղի՞ց եք դրանք գնում:**

1. Համայնքի դեղատնից, որն աշխատում է շուրջօրյա
2. Համայնքի դեղատնից, որն աշխատում է միայն որոշակի ժամերի
3. Հարևան համայնքի դեղատնից
4. Մարզկենտրոնից/այլ քաղաքից
5. Երևանից
6. Արտերկրից
7. Այլ _______________

**Հարց 10. Մատչելի՞ է բուժումը հաստատություններում**:

1. մատչելի է,
2. մատչելի չէ,

**Հարց 11.Գնահատե՛ք Ձեր ընտանիքի եկամուտների փոփոխությունը վերջին տարիների ընթացքում:**

1. Կտրուկ նվազել են
2. Նվազել են
3. Մնացել են նույնը
4. Կայուն աճել են
5. Կտրուկ աճել են

**Հարց 12.Որո՞նք են Ձեր ընտանիքի եկամտի հիմնական աղբյուրները:**

1. Հիմնական աշխատավարձ
2. Վճարովի այլ աշխատանք
3. Դրամական փոխանցումներ/տրանսֆերներ արտասահմանից

4. Առևտուր
5. Սեփականության վարձակալություն
6. Թոշակ/նպաստ
7. Գյուղմթերքի, այլ ապրանքների վաճառք
8. Այլ աղբյուրներ

**Հարց 13 Նշված էկոլոգիական խնդիրներից որո՞նք են առկա Ձեր բնակավայրում և որքանո՞վ են վտանգավոր դրանք Ձեր ընտանիքի համար:**

| N | |
|---|---|
| 1 | **Սողանքներ** |
| 2 | **Վարարումներ/ջրհեղեղներ** |
| 3 | **Օդի աղտոտվածություն** |
| 4 | **Հանքահումքային վնասակար նյութեր** |
| 5 | **Վնասակար արտադրությունների արտազատումներ** |
| 6 | **Աղբի/արտադրական թափոնների կուտակումներ** |
| 7 | **Անտառահատումներ/ծառահատումներ** |

**Հարց 14. Նշե՛ք, թե որքանով եք բավարարված Ձեր ընտանեկան հարաբերություններում**

| |
|---|
| 1 Ընտանիքում աջակցության և հոգատարության մթնոլորտով |
| 2 Ընտանիքում փոխըմբռնման մթնոլորտով |
| 3 Ընտանիքի հետ ժամանակ անցկացնելու հնարավորությամբ |

**Հարց 15. Գո՞հ եք արդյոք Ձեր կյանքից:**

Այո

Ոչ